2020, ԴԵԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 24 (572)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Արցախյան պատերազմում նահատակվածների հոգեհանգստյան արարողությանը

Դեկտեմբերի 20-ի առավոտյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եպիսկոպոսների ուղեկցությամբ այցելեց Եռաբլուրի զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու եւ աղոթք բարձրացնելու արցախյան պատերազմում նահատակված քաջորդյաց հոգիների խաղաղության համար:

Ծաղկեպսակի զետեղումից հետո Վեհափառ Հայրապետն ու եկեղեցականներն այցելեցին նաեւ զինվորականների շիրիմներին, կատարեցին իրենց առանձնական աղոթքը:

Այնուհետեւ Ս. Գայանե վանքում մատուցվեց Պատարագ, որի ավարտին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, զոհված հերոսների համար կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Արարարողությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց հոգեւոր դասին, ներկա բարեպաշտ հավատացյալներին եւ համայն հայ ժողովրդին.

«Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր,

Այսօր վերստին ոգեկոչում ենք լույս հիշատակը հայրենիքի համար զոհված մեր զինվորների, աշխարհազորայինների եւ զորահրամանատարների, որոնք արցախյան պատերազմում խիզախաբար պայքարեցին անարգ թշնամու դեմ եւ իրենց թանկագին արյան հեղումով ընդունեցին նահատակության անթառամ պսակը: Քաջարի սխրագործություններով նրանք անմահացան մարտի դաշտում եւ ժառանգեցին հավիտենական կյանքի պարգեւը, ինչպես խոստացավ մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ ասելով. «Արդ, Ես նրանց հավիտենական կյանք կտամ, եւ նրանք հավիտյան չեն կորչի» (Հովհ. 10. 28):

Տերունավանդ խոստումին ապավինած՝ մեր սիրասուն զավակներն իրենց կյանքն ընծայեցին հայրենիքին եւ անօրինակ սխրանքներով զարդարեցին հայոց ազատամարտի նորագույն էջերը: Հայ ժողովուրդը կրկին հերոսներ ծնեց, ովքեր բարձր ու լուսաշող տեղ գրավեցին հայոց տարեգրության մեջ եւ երկնքում դասվեցին բոլոր ժամանակներում վասն հավատո եւ վասն հայրենյաց մարտնչած ու նահատակված քաջերի կողքին: Մեր հերոսները զոհվեցին արցախահայության ազատ ապրելու արդար իրավունքի եւ հայրենիքի խաղաղ, ապահով եւ բարօր կյանքի տեսիլքով՝ պատգամելով մեզ աննկուն լինել ոգով եւ արիաբար պայքարել՝ հանուն մեր ազգային նպատակների իրագործման:

Սիրելինե՛ր, վիշտն ու սուգը Աստված փարատում է Իր Սուրբ Հոգու մխիթարությամբ եւ սփոփիչ զորությամբ: Նա շնորհն ու կարողությունն է պարգեւում, որ վեր հառնենք նեղություններից ու դժվարություններից, Քրիստոսի նման հարություն առնենք մեր պատմության հերթական Գողգոթայից եւ վկայենք աշխարհասփյուռ մեր ժողովրդի ներուժը, աստվածապարգեւ մեր հավատն ու ամուր կամքը, նոր կյանք կառուցելու մեր եզակի վճռականությունը:

Համազգային ուժերով եւ միասնական ոգով ներքին ու արտաքին մարտահրավերներին դիմագրավումը, քաղաքական եւ հասարակական ճգնաժամի հաղթահարումը պիտի լինեն մեր արժանի տուրքն ու խոնարհումը նահատակ հայորդիների շիրիմներին: Ներկա բարդ իրավիճակում զգաստության եւ ողջախոհության պահպանումը, մեր նահատակների կորուստը արժանավայել սգալը եւ սուգը չքաղաքականացնելը պիտի լինեն նվիրական հարգանքի ճշմարիտ արտահայտությունը մեր հերոսների անմոռաց լույս

հիշատակի առջեւ: Ազգային համերաշխությամբ ու համընդհանուր շահերի վսեմ գիտակցությամբ ապրելու ու արարելու մեր ընթացքը պիտի լինի պատվաբեր շարունակությունը մեր զավակների քրիստոնեանման անձնազոհության:

Արդ, մեր նահատակ հերոսների անմար լույս հիշատակի առջեւ վերահաստատենք հայրենանվիրումի ու ազգանվիրումի ուխտը: Թող ազգի ու հայրենիքի հանդեպ նրանց պարտքի գիտակցությունը, հանձնառության եւ զոհաբերության ոգին օրինակ դառնան պետական ու քաղաքական այրերին եւ համայն մեր ժողովրդին՝ անսակարկ նախանձախնդրությամբ եւ անձնուրաց զոհողություններով ամեն կարելին ներդնելու մեր հայրենիքի բարօր ու շեն կյանքի կերտման եւ մեր պետականության ամրապնդման համար: Չվտանգենք մեր պետականությունը անխոհեմ քայլերով, չգերադասենք անձնական շահերը, այլ գործենք հանուն մեր ժողովրդի ու հայրենյաց անկորուստ պահպանության, զորացման ու առաջընթացի: Միայն ուժեղ պետությամբ է հնարավոր հավերժացնել մեր ինքնությունն ու լինելիությունը, նաեւ մեր քաջորդիների հիշատակը:

Ի խորոց սրտի աղոթենք միասին, որ ամենագութն Աստված հանգստություն ու երանություն շնորհի քաջաբար զոհված մեր սիրասուն զավակների անմահ հոգիներին: Աղոթենք, որ գթառատ Տերն Իր Սուրբ Հոգով սփոփի մեր հերոսների ծնողների, կանանց ու զավակների սգացյալ սրտերը եւ մեր բոլորի վշտակիր հոգիները: Թող այլեւս սուգն ու տխրությունը չմթագնեն մեր ազգային կյանքը, ողբերգությունները չպատուհասեն մեր ժողովրդին, եւ Աստծուն ապավինած ու ազգովին համախումբ՝ կերտենք լուսավոր գալիքը հայրենյաց եւ համայն հայության:

Փառք եւ երիցս փառք մեր նահատակ որդիներին:

Խոնարհում, մշտահունչ աղոթք եւ բյուր օրհնություն մեր հերոսների լույս հիշատակին»:

Խոսքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց առ բարեգութն Աստված՝ ասելով.

«Քրիստո՛ս Որդի Աստծո, որ ներողամիտ ես ու բարեգութ, ընդունիր մեր աղոթքները եւ ունկնդիր եղիր մեր խնդրանքներին: Արարչական սիրովդ գթա Արցախյան ազատամարտում Հայրենիքի պաշտպանության համար նահատակված մեր հերոս զինվորների եւ զորավարների հոգիներին: Լույսերիդ մեջ աջակողմյան դասում ընդունիր նրանց՝ Քո սուրբերի հետ միասին եւ պարգեւիր երկնքի անվախճան արքայությունդ:

Ամենախնամ Տեր, Քո աստվածային ազատությունը պարգեւիր մեր գերիներին, որպեսզի օր առաջ նրանք ապահով տուն վերադառնան:

Քո անքրիչ եւ կենդանարար սիրով օրհնիր եւ բժշկություն պարգեւիր նաեւ վիրավորներին ու ապաքինվող բոլոր անձանց եւ Քո Սուրբ Հոգու մխիթարիչ զորությունը պարգեւիր որդեկորույս ծնողներին՝ սգակիր հայրերին ու մայրերին, այրիացյալ կանանց ու որբացած մանուկներին, նրանց հարազատներին եւ վշտակիր համայն մեր ժողովրդին:

Բարերա՛ր եւ բազումողորմ Տեր, Քո հայրական խնամքով եւ ամենախնամ Սուրբ Աջովդ պահպանիր մեր ժողովրդին սիրով միաբան՝ Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում եւ զորացրու մեր հոգիները հավատքով ու հույսով, որպեսզի Քո օգնականությամբ այս ծանր ճգնաժամը եւս հաղթահարենք: Հեռացրո՛ւ մեզնից ատելության ու բռնության չարիքը եւ շնորհի՛ր համերաշխության ու եղբայրասիրության ոգի, որպեսզի ազգովին համախումբ շենացնենք ու զորացնենք մեր հայրենիքը եւ հանապազ գոհությամբ օրհնաբանենք Քեզ՝ Հոր եւ Սուրբ Հոգու հետ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն»:

Մեկնարկեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Աջակցենք Արցախին» ծրագիրը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հաստատվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Աջակցենք Արցախին» ծրագիրը, որի նպատակն է բացառաբար հումանիտար ծրագրերով հոգատարություն ցուցաբերել Արցախում ծանր կացության մեջ հայտնված ժողովրդին եւ պատերազմի հետեւանքով արցախյան գյուղերից տարհանված եւ Հայաստանում ապաստանած ընտանիքներին:

Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի միջոցով իրականացվող ծրագրի աշխատանքները համակարգելու է ստեղծված հանձնախումբը՝ ատենապետությամբ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Խաժակ արք. Պարսամյանի: Հանձնախմբի կազմում ընդգրկված են եկեղեցականներ եւ աշխարհականներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից եւ բոլոր մայրցամաքներից:

Այս առիթով օրերս Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեսակապի միջոցով հանդիպում ունեցավ հանձնախմբի հետ: Նորին Սրբությունը հայրական իր օրհնությունն ու գնահատանքը բերեց հանձնախմբի անդամներին, որ այս դժվարին ու ծանր օրերին ստանձնել են Մայր Աթոռի նախաձեռնած ծրագրի շրջանակներում իրենց օգտաշատ աջակցությունը բերել Արցախի հայորդիներին:

Հայոց Հովվապետն անդրադարձավ Հայաստանի ու Արցախի առջեւ ամենատարբեր ոլորտներում այսօր ծառացած լուրջ մարտահրավերներին՝ ընդգծելով, որ առկա պայմաններում Հայոց Եկեղեցին պետք է անի ամեն անհրաժեշտը՝ առավելագույնս աջակցություն մատուցելու մեր հայրենիքին ու ժողովրդին: Այս առումով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց հանձնաժողովի առաքելությունը՝ հույս հայտնելով, որ նախատեսված գործունեությունը կստանա համազգային եւ համասփյուռքյան ընդգրկում:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին առաջիկայում ձեռնարկվելիք քայլերը, Հայոց Եկեղեցու թեմերի եւ ազգային հաստատությունների համագործակցությանն առնչվող հարցեր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահին

Դեկտեմբերի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց Սահմանադրական դատարանի առաքելությունը՝ երկրում օրինականության եւ արդարության պաշտպանության գործում:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ հայրենիքում ստեղծված իրավիճակին:

Հովնան եպս Հակոբյանը՝ Գուգարաց թեմի առաջնորդ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ դեկտեմբերի 21-ի հայրապետական տնօրինությամբ Հովնան եպս Հակոբյանը, ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետի եւ մայրավանքում զբաղեցրած մյուս բոլոր պաշտոններից, նշանակվել է Գուգարաց թեմի առաջնորդ:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ՆՌՆՕՐՀՆԵՔ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ 2015 թ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում հաստատվեց նռնօրհնության կարգ, որն առաջինը կատարեց հենց ինքը՝ Հայոց 132-րդ Հայրապետը: Եվ այսպես՝ ամեն տարվա Ամանորի գիշերը՝ ժամը 00:30-ին, ինչպես Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, այնպես եւ Հայ Եկեղեցու բոլոր եկեղեցիներում գոհաբանական մաղթանքի ավարտին կատարվում է նռնօրհնեքի արարողություն: Նռնօրհնեքի գաղափարը ծագեց ոչ միայն Հայոց աշխարհում նռան լայնորեն մշակում ունենալու, Հայաստանի խորհրդանիշներից մեկը հանդիսանալու համար, այլեւ առաջին հերթին իր հոգեւոր խորհրդաբանությամբ:

Նռնենին՝ իր ծաղկաբույլերի շառագունող գեղեցկությամբ, հյութեղ, թթվանուշ կամ քաղցրանուշ պտուղներով, բուժական հատկանիշներով, մարդկությանը հայտնի է դեռեւս անհիշելի ժամանակներից: Նուռն աշխարհի ամենախոշոր հատապտուղն է: Նռնենի չտեսած մեկին թող զարմանալի չթվա, երբ ասում ենք՝ հատապտուղ, որովհետեւ նռնենիները, ի տարբերություն մնացյալ պտղատու ծառերի, թփեր են կամ էլ թփանման ծառեր: Նռնենու ընձյուղները բարակ են՝ պատված սրածայր ու ամուր փշերով, պտուղը, ինչպես նշեցինք, խոշոր է, գնդաձեւ՝ թեթեւակի նիստերով, գլխամասում թագ հիշեցնող գավաթիկով, հաստ պտղամաշկում դասդասված հյութեղ, թափանցիկ, 400–800, ավելի խոշորներում՝ 1000–1200 հատիկ, որոնց «շարվածքակույտերը» միմյանցից բաժանված են բարակ թաղանթավոր միջնապատերով: Նռնենիները հողի եւ խնամքի նկատմամբ քմահաճ չեն, սակայն արեւասեր են, այդ իսկ պատճառով էլ խիստ կլիմայական գոտիներում չեն աճում:

Նռնենու ծաղիկները ոչ միայն զարմանալի գեղեցիկ են, այլեւ դրանց չորացրած թերթիկներից պատրաստում են թեյ, որը ոչ միայն օգտակար է, այլեւ ունի խիստ հաճելի տտիպ համ: Իսկ հատիկների թթվանուշ հյութը ծարավը հագեցնող հրաշալի ըմպելիք է: Նռան հյութն ու չորացրած հատիկներն օգտագործում են մի շարք ճաշատեսակներում, պտղամաշկից ու արմատներից պատրաստում են բուժիչ եփուկներ, այն նաեւ հրաշալի ներկանյութ է, օգտագործվում է նաեւ կոսմետիկ նպատակներով: Նուռը լայնորեն օգտագործվում է նաեւ գինեգործության մեջ:

Նուռն արեւելյան ժողովուրդները համարել են բոլոր պտուղների արքան՝ ոչ միայն նրա՝ քիմքին հաճելի համի, բուժիչ հատկությունների, արտաքին գունաթույրերի ու նիստավորումների, ներքին՝ հատիկների ճարտարապետական ինքնատիպ կառույց հիշեցնող տեսքի, այլեւ գլխամասում գտնվող թագանման հավելույթի պատճառով՝ այն ամենեւին պատահականություն չդիտելով: Տեսակետ կա, որ արքայական թագի նախատիպը հնում վերցրել են նռան «թագից», իսկ որմնաշարվածքի որոշակի տեսակը՝ նռան հատիկների՝ միմյանց ագուցվելու կերպից:

Մերձավոր ու Միջին Արեւելքին նուռը հայտնի էր դեռեւս Ք. ծ. ա. 12–7-րդ դդ.: Մեծ համբավ ուներ կարթագենյան նուռը: Այս պատճառով էլ հին հռոմեացիները նուռը կոչեցին Malum punicum «կարթագենյան (փյունիկյան) խնձոր» եւ malum granatum «հատիկավոր խնձոր» անվանումներով: Վերջինս հետագայում ավելի մեծ տարածում գտավ, եւ շատ ու շատ ժողովուրդներ փոխառան հենց «granatum» տարբերակը (անգլ.– pomegranate, գերմ.– granatapfel, իտալ.– melograna, իսպ.– granada, ֆր.– granade, ռուս.– гранат եւ այլն): Իսկ պարսիկները, ինչպես նաեւ պարսկալեզու մյուս ժողովուրդները նուռը կոչում են անար (anar), որ նշանակում է կարմրահատ, հրակերտ, հրահատ: Ի դեպ, կարծիք կա, որ նռան հայրենիքը հենց Պարսկաստանն է: Իսկ հայերեն «նուռն» բառը, ըստ Մագիստրոսի, առաջացել է «կուռ» բառից, ինչը Հ. Աճառյանը հավաստի չի համարում:

Նուռը, վաղնջական ժամանակներից ի վեր, ունեցել է նաեւ առանձնահատուկ ու հարուստ սիմվոլիկա: Դա մեծապես պայմանավորված է եղել նռան գունային երանգներով (մուգ մոշագույնից մինչեւ բաց կանաչավարդագույն), յուրօրինակ ծավալաձեւով, հատիկների «ճարտարապետական» կառուցվածքով ու միասնականությամբ:

Ըստ հին հույների՝ նռնենին աճել է բուսականության աստված, խաղողագործության ու գինեգործության հովանավոր Դիոնիսիոսի արյան միջից, փյունիկեցիների համար ունեցել է կենաց ծառի խորհրդանիշ: Նուռը՝ որպես պտղաբերության, մաքրագործության խորհրդանիշ, բուդդիզմի երեք սրբազան պտուղներից մեկն է՝ ցիտրուսների եւ դեղձի կողքին: Նուռը ձոնված էր հունական սիրո եւ գեղեցկության աստվածուհի Աֆրոդիտեին (հռոմ. դիցարանում՝ Վեներա), ինչպես եւ՝ մայրության եւ հողագործության աստվածուհի Հերային (Յունոնա): Սկանդինավյան ժողովուրդների ավանդության մեջ նուռն է համարվում դրախտի արգելված պտուղը:

Նուռը պտղաբերության, առատության, մեծահոգության, մաքրագործության ընդհանրական խորհրդանիշ է:

➥ էջ 3

Բացառիկ Հայրապետը

Նվիրվում է Ներսես Շնորհալու ծննդյան 920-ամյակին

Սկիզբը՝ թիվ 23

Շնորհալու չափածո երկերից է «Բան հաւատոյ» (1151 թ.) կրոնադավանական բովանդակությամբ քերթվածը: Գրվել է Եկեղեցու հայրերի դավանական գրվածքների հետեւողությամբ: Հեղինակը, այս գործն ստեղծելով, նպատակ է ունեցել հերքելու քաղկեդոնականությունը եւ պաշտպանելու ու հաստատելու Հայ Եկեղեցու ուղղափառությունը: Այս ստեղծագործությունը հետագա դարերում հայ դավանաբաններին ծառայել է իբրեւ հակաքաղկեդոնական պայքարի գաղափարական զենք:

Ներսես Շնորհալու քնարի գլուխգործոցը «Յիսուս որդի» պոեմն է: Այն համարվում է հայ մատենագրության երկրորդ Նարեկը, քանզի կոչվում է նաեւ «Ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց»: Պոեմը Հին ու Նոր կտակարանյան պատմությունների բանաստեղծական վերասություն է՝ շաղախված Ընդհանրական Եկեղեցու պատմության դրվագներով: Շնորհալու այս ստեղծագործությունը դարերի հոլովույթում հայոց մեջ ունեցել է մեծ ժողովրդականություն, եղել ամենասիրելի գրքերից մեկը, բազմիցս վերահրատարակվել է (1643–1928 թթ. ընկած ժամանակահատվածում տպագրվել է 13 անգամ), թարգմանվել մի շարք օտար լեզուներով: «Վիպասանութիւն»-ը, «Ողբ Եդեսիոյ»-ն, «Բան հաւատոյ»-ն եւ «Յիսուս Որդի»-ն գեղարվեստական չափածո խոսքի նոր տեսակներ են, հայ վիպերգական եւ վիպաքնարական պոեմների նախօրինակները»,– կարդում ենք «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում:

Շնորհալու բանաստեղծական աշխարհում ուրույն ու առանձնահատուկ տեղ է գրավում «Հաւատով խոստովանիմ» նշանավոր աղոթքը: Առաջին անգամ այս գործը լույս է ընծայվել 1616 թ. Լվովում՝ «Սաղմոս ի Դաւիթ» գրքում, այնուհետ՝ 1661 թ. Ամստերդամում՝ «Կարճառօտ ժամագիրք» ժողովածուում: Առանձին գրքով առաջին անգամ տպագրվել է Վենետիկում 1690 թ., ապա բազմիցս վերահրատարակվել: «Հաւատով խոստովանիմ»-ը համաշխարհային հոգեւոր գրականության հավերժափայլ ադամանդներից է (թարգմանվել է 36 լեզվով): Աղոթքը բաղկացած է 24 տնից՝ օրվա 24 ժամերի համեմատ, ներառում է աղոթքի բոլոր տեսակները՝ դավանական, զղջական, պաղատական, խոստովանական եւ այլն: Հեղինակն իր այս ստեղծագործությունն անվանել է «Աղօթք պիտանիք իւրաքանչիւր անձին հավատացելոց ի Քրիստոս»:

Շնորհալիական չափածոյի նշխարներից են ներբողյանները (թվենք մի քանիսը՝ «Ի սուրբ Խաչն», «Առ սուրբ հրեշտակսն» եւ այլն), խրատները, առակները (հանելուկ): Հանելուկի՝ որպես գրական առանձին ժանրի ստեղծումը, հղկումը եւ դասականորեն կատարելագործումը կապվում են Շնորհալու անվան հետ: Նրանից մեզ հասել է 300-ից ավելի հանելուկ. դրանք գրվել են «վասն ուրախութեան մարդկան» եւ նպատակ են ունեցել զվարճալի եղանակով գիտելիքներ տալու, մարդկանց մեջ զարգացնելու սրամտություն եւ դիտողականություն: Շնորհալուց պահպանվել են մանկավարժական-ուսուցողական բնույթի բանաստեղծություններ, ուղերձներ ու բանքեր, որոնք չունեն իրենց նախօրինակները հայ բանաստեղծական արվեստում. դրանց նպատակը մարդկանց բարոյապես կրթելն է, օգտաբեր գիտելիքներ տալը: Օրինակ՝ «Խրատ ուսումնականաց մանկանց այբուբենից տառից ոտանաւոր տաղիւ չափոյ» բանաստեղծությունը բաղկացած է 36 հանգավոր տնից, որոնցից յուրաքանչյուրն սկսվում է հայոց այբուբենի հերթական տառի անունով: Հեղինակն այս հորինվածքին է դիմել, որպեսզի, ինչպես ինքն է նշել, մանուկները կարողանան հեշտությամբ և՛ նյութը մտապահել, և՛ յուրացնել հայոց գրերի կարգը: Հայոց գրերի կարգի յուրացմանը նպաստող ստեղծագործություններից են նաեւ Շնորհալու «Առաւօտ լուսոյ»-ն, «Աշխարհ ամենայն»-ը:

Ուսման, գիտելիքի, լույսի համակ պաշտամունքը Շնորհալին, անշուշտ, մեծապես կարեւորում էր ազգի, հասարակության կրթությունն այն աստիճանի, որ հանուն այդ սուրբ գործի, ինչպես տեսնում ենք, օգտագործել է անգամ իր գրականությունը:

Շնորհալին մեծ հոգեբան էր եւ շատ լավ էր հասկանում, որ գիտելիքներ ստանալուն, գիտելիքների յուրացմանը կարող է նպաստել այդ գործընթացը հաճելի, զվարճալի դարձնելը, եւ քիչ վերը հիշատակված իր գրական գործերի միջոցով նա հաճելի, զվարճալի եղանակով գիտելիքներ է տալիս ընթերցողին, արդեն տեսանք, որ իր գեղարվեստական գրականությունը, մարդկանց կրթելուց զատ, ծառայեցրել է նաեւ նրանց մեջ ինչ-ինչ ունակություններ զարգացնելուն: Փաստորեն՝ Հայոց Հայրապետն օժտված էր նաեւ մանկավարժ-տեսաբանի շնորհով:

Հայ եւ համաշխարհային մտքի ու գիտության մեկ այլ մեծության՝ իր բարեկամ բժշկապետ Մխիթար Հերացու խնդրանքով Շնորհալին գրել է «Յաղագս երկնից եւ զարդուց նորա» (1162 թ.) տիեզերագիտական պոեմը:

Գրչի հանճար Հայրապետի երկերի մեծամասնությունը բազմիցս հրատարակվել ու վերահրատարակվել է (հրատարակվում ու վերահրատարակվում է նաեւ այսօր՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում), թարգմանվել տասնյակ լեզուներով:

Ներսես Շնորհալին արարել է նաեւ երաժշտության ասպարեզում, եւ այստեղ էլ հունձքը եղել է որակով ու քանակով ծանրակշիռ: Երաժիշտ եւ շարականագիր Շնորհալին հայ, կասեի նաեւ համաշխարհային երաժշտարվեստի գանձարանը հարստացրել է ժանրորեն բազմազան երաժշտական ժառանգությամբ: Դրանք տերունական, պահոց օրերի, սրբերին նվիրված, դավանական, վարքագրական,ազգային-հայրենասիրական բովանդակությամբ շարականներ են, տաղեր, գանձեր, մեղեդիներ: Դարեր ի վեր մեծ ժողովրդականություն են վայելել գիշերային ժամի «Առաւօտ լուսոյ»-ն, «Յիշեսցուք»-ը, «Զարթիք»-ը, «Աշխարհ ամենայն»-ը, առավոտյան ժամի «Նորաստեղծեալ»-ը, «Արարչական»-ը (ըստ շաբաթվա 6 օրերի), արեւագալի ժամի երգերը՝ «Յարեւելից մինչեւ ի մուտս», «Ճգնաւորք Աստուծոյ», «Լոյս, արարիչ լուսոյ», «Անեղանելիդ Աստուած», «Ճանապարհ եւ ճշմարտութիւն», ճաշու կամ երրորդ ժամի «Օրհնեմք զքեզ»-ը, «Նահապետին Աբրահամու»-ն, խաղաղական ժամի «Նայեաց սիրով»-ը, «Ի քէն հայցեմք»-ը եւ այլն:

Ներսես Շնորհալունն են նաեւ Համբարձումից մինչեւ Հոգեգալուստ պահք պահելու, Վարդավառի, Հոգեգալստյան եւ Վերափոխման տոները երեքօրյա եւ բազմօրյա դարձնելու հրահանգը եւ այդ տոներին նվիրված շարականները: Հիշատակության արժանի են Աբգար արքային, Տրդատ Գ Մեծին եւ Աշխեն արքայուհուն, սուրբ Գեւորգ եւ սուրբ Սարգիս զորավարներին, Ավարայրի հերոսներին, Ղեւոնդյանց նահատակներին ձոնված շարականները: Հատկապես բարձրարվեստ են Վարդանանց նվիրված «Նորահրաշ պսակաւոր» եւ «Արիացեալք» շարականները:

Շնորհալու՝ երաժշտության տիրույթում *թողած հետագիծն* ավելի լավ չենք կարող բնորոշել, քան դա արված է «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում, ուստիեւ մեջբերում ենք այդ հատվածը. «Ներսես Շնորհալին հայ երաժշտության կիլիկյան դպրոցի ամենափայլուն ներկայացուցիչն է եւ առհասարակ միջնադարյան Հայաստանի մասնագետ բանաստեղծ-երաժիշտներից մեծագույնը: Նա իր արվեստի խորքով, տարրողությամբ ու արժեքով դուրս է գալիս ազգային սահմաններից ու դառնում համաքրիստոնեական (մանավանդ՝ արեւելաքրիստոնեական) քաղաքակրթության խոշոր երեւույթներից մեկը: Պահպանված գրական ու երաժշտական շատ նյութեր, ձեռագիր փաստեր ցույց են տալիս, որ Ներսես Շնորհալին եղել է ոչ միայն բազմարդյուն երգահան, այլեւ իր ժամանակի լավագույն երգիչ կատարողներից մեկը, գեղագետ, տեսաբան, ուսուցիչ, իսկ որպես ստեղծագործող՝ հորինել է հոգեւոր (եկեղեցական) արտապաշտամունքային ու, ամենայն հավանականությամբ, նաեւ աշխարհիկ երգեր: Արտապաշտամունքային են կոչվում այն ստեղծագործությունները, որոնք թեեւ արդյունք են կրոնական ներշնչման, բայց նախատեսվել են ոչ թե պաշտոներգության մեջ ներմուծելու, այլ կենցաղում կատարելու համար: Ներսես Շնորհալու արտապաշտամունքային գործերից «Յիսուս Որդի» ծավալուն պոեմն անցյալում եղանակավոր (ասերգի ձեւով) պատմվել ու մի ամբողջ շարք հատվածներում էլ նաեւ երգվել է, ինչպես «Սասունցի Դավիթ» էպոսը:



Շարունակությունը՝ էջ 4

ՆՌՆՕՐՀՆԵՔ

➥ էջ 2

Նուռը գլխին «թագ» ունենալու պատճառով համարվել է նաեւ վերին իշխանության նշան, իսկ պտղի՝ հաստ կեղեւի մեջ պարփակված բազմաքանակությունը խորհրդանշել է տիեզերքը՝ մոլորակներով ու աստղերով:

Նռան սիմվոլիկան բավականին տարողունակ է նաեւ քրիստոնեության մեջ. այն մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խորհրդապատկերն է՝ Իր՝ գավաթում հեղված արյամբ, իսկ կերպարվեստում, երբ պատկերել են Տիրոջը՝ նռով, արտահայտել են Քրիստոսի հարության գաղափարը: Նուռը խորհրդանշում է Աստծո շնորհների բազմազանությունը, Եկեղեցին՝ իր բազմաթիվ հոտով՝ գլուխ ունենալով թագակիր Տիրոջը:

Նուռը, և՛ իր խորհրդանշական իմաստով, և՛ որպես ազգային զարդամոտիվ, լայն տարածում է ունեցել հայկական ճարտարապետության, գորգագործության, կիրառական արվեստի շատ տեսակների, մանրանկարչության մեջ (Գրիգոր Խլաթեցու, Թորոս Տարոնացու, Թորոս Ռոսլինի նկարազարդած՝ Հաղպատի եւ այլ Ավետարաններ): Հայ Եկեղեցու խորանների մեկնություններում նռնենիները նմանեցվում են մարգարեների խոսքին, որոնք, առակի պես, իրենց հաստ ու դառը կեղեւով ծածկում են քաղցրության Ավետիսը, անմահության պտուղը՝ Քրիստոսին:

Հայաստանում նուռն ինչպես անցյալում, այսօր եւս կիրառվում է բուժական նպատակներով, իսկ նռան գինին մշտապես իր ուրույն տեղն է ունեցել եւ ունի հայկական գինեգործության մեջ:

Նուռը՝ որպես Հայաստանում տարածված պտուղներից մեկը, մշտապես գրավել է հայ նկարիչներին ու քարագործ վարպետներին, իսկ որպես բանաստեղծի, ստեղծագործող անհատի հոգեկան աշխարհի բազմանիստ արտահայտություն՝ տեղ գտավ նաեւ Սերգեյ Փարաջանովի հանրահայտ ֆիլմում: Արդի հայ կերպարվեստում՝ մասնավորապես նատյուրմորտի ժանրում եւ կիրառական արվեստում, խիստ տարածված է նռան պատկերումը: Որպես հայկական հուշանվեր՝ մեծ տարածում ունեն փայտից եւ կերամիկայից պատրաստված նռան նմուշները, քիչ չեն նաեւ արծաթե զարդանախշերը: Նռան եւ նռնենու պատկերումները տարածված են նաեւ բուն եկեղեցական արվեստում: Թվարկումը չերկարացնելու համար բերեմ լոկ մի քանի նմուշ, որոնք պահպանվում են Մայր Աթոռ Սբ Էջմիածնում: Օրինակ՝ սբ Գր. Լուսավորչի Աջի «թեղանիքի» վրա փորագրված ծաղկազարդերը նռան տեսք ունեն, եւ ամենեւին էլ պատահական չէ, որ դրանց թերթերն ագուցված են ամբողջապես նռնաքարերով՝ թերեւս ընդգծելու համար Աջի հատուկ «իշխանություն» ունենալու հանգամանքը: Նռան պատկեր ունի նաեւ Գանձատանը պահպանվող 18-րդ դարի մի պանակե՝ ագուցված նռնաքարերով ու մեղեսիկներով, որոնք, ինչպես գիտենք, իրենց գունաթույրերով մոտ են նռնաքարերին: Այստեղ է պահպանվում նաեւ նռներ պատկերող զարդանախշերով մի փորուրար (19-ր դդ.), ինչպես նաեւ՝ Փիլիպոս կաթողիկոսի արծվագորգը (1651 թ.) եւ այլն:

Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ (1830–1892)

Սկիզբը՝ թիվ 18–23

Մանկական բանաստեղծություններ

Հասարակության չափահաս անդամներն արդեն ձեւավորված բնավորություններ են, եւ դժվար ուղղելի կամ հիմնականում անուղղելի են նրանց մարդկային թերությունները: Դրանցով էին պայմանավորված նաեւ հասարակական արատավոր բարքերը, որոնք կբարեփոխվեին, եթե համայնքն ունենար բարեկիրթ անդամներ: Պատկանյանը գիտակցում էր, որ մարդու եւ հասարակության անդամի դաստիարակությունը պետք էր սկսել օրորոցից՝ մանկական դյուրաթեք տարիքից, քանի դեռ նա չի կորցրել հիանալու եւ զարմանալու կարողությունը, քանի դեռ նրա մեջ չեն կարծրացել վատ սովորույթները, ու չեն ձեւավորվել բնավորության հոռի կողմերը: Բնության, շրջապատող միջավայրի հետ առաջին ծանոթությունը մեծ կարեւորություն ունի երեխայի աշխարհաճանաչողության ու վարքագծի ձեւավորման մեջ: Ահա այստեղ է, որ գրողը պետք է իր կենսափորձը, աշխարհայացքը հարմարեցնի, համապատասխանեցնի մանկան ընկալումներին, նա մանկան աչքերով պետք է նայի բնության երեւույթներին, արեւին ու աստղերին, տարվա չորս եղանակներին, ծառերին ու ծաղիկներին, կենդանիներին ու թռչուններին: Գեղարվեստական պատկերը գրողը պետք է կառուցի այնպես, որ նրա մեջ դրսեւորվեն երեւույթների, շնչավոր ու անշունչ առարկաների մանկական ընկալումներն ու նրանց հանդեպ դրսեւորվող համապատասխան վերաբերմունքը: Ահա, օրինակ, «Բադիկը», որ մանկան ու անձնավորված բադիկի սրամիտ հարցուպատասխանով, մաքրասիրության հորդորով ու իր բարձր արվեստով հավիտենապես գրավելու է «փոքր մեծերին եւ մեծ փոքրերին».

Բադիկ-բադիկ,
Կարմիր թաթիկ,
Ո՞ւր ես գընում կամաց-կամաց,
Ձագուկներըդ չորս կողմըդ առած.
– Ես գընում եմ ջուր գըտնելու,
Ձագուկներիս լըվանալու,
Ձագուկներըս մաքո՜ւր-մաքուր,
Տղոց երեսն աղտ է ու մուր (2, 249):

Դաստիարակությունն սկսվում է այն պահից, երբ մանկան հայացքով արժեւորվում եւ իմաստավորվում են առարկաներն ու երեւույթները՝ Նոր տարին ու ձմեռը, արեւն ու գարունը, անձրեւն ու աշունը, մանուշակն ու վարդը, կռունկն ու ծիծեռնակը, մեղուն ու կատուն, բադիկն ու սոխակը, տարատեսակ մրգերը: Եվ այս գործընթացում անպայման կարեւորվում է գրող արվեստագետի ուղղորդող դերը. ասենք՝ ծուլության ու ժրաջանության, իմացության եւ տգիտության իմաստավորումը, բարոյականի, առաքինության ու ազգային-հայրենասիրական զգացմունքների պատվաստումը:

«Ձմեռ» բանաստեղծության մեջ, մատնանշելով այդ եղանակին բնորոշ ցուրտը, ձյունը, սառույցը եւ այլ հատկանիշներ, նա հայ երեխային ներարկում է իր կարիքավոր ազգակիցներին օգտակար լինելու պատրաստակամություն.

Չըգիտեմ ինչո՞ւ ձըմեռվա օրը
Ես միշտ հիշում եմ իմ հայ եղբորը:
Ասում եմ՝ արդյոք չունի՞ նա կարիք,
Հաց, միս, եղ ու փայտ ունի՞ նա հերիք:
Ունի՞ տաք հալավ, ունի՞ նա մուշտակ,
Ամո՞ւր է տունը, կըտուրը չէ՞ ծակ...
Ու այնպես ես միշտ ձըմեռվա օրը
Միտս բերում եմ իմ հայ եղբորը (2, 228):

Հայ երեխային կրթություն տալը Պատկանյանը համարում էր պարտադիր. մեծ դժբախտություն չէր, եթե հողագործը չունենար հողը հերկելու եզ ու արոր, կամ խանութպանը չունենար փող ու ապրանք: Մեծ անբախտություն էր հայ երեխայի դպրոց չգնալը, անկիրթ եւ անուսում մեծանալը.

Բայց երբ չերթա հայ տղան վարժատուն,
Այս է ամենից մեծ անբախտություն
(2, 236):

Պատկանյանի մանկական բանաստեղծությունները մեծիմասամբ փոքրածավալ են ու երգեցիկ, պարզ ու մատչելի, հաճախ շուտասելուկի պես արտասանվող, կարճ տողերի եւ կանոնավոր հանգավորման շնորհիվ դյուրությամբ մտապահվող: Այդպիսիք են *«Պտուղներ», «Ամենամեծ անբախտությունը», «Գառնուկ», «Խելոք երեխա», «Կռունկներ», «Կատու», «Աքլար», «Բադիկ»* եւ այլ բանաստեղծություններ: Տարատեսակ պտուղներ ամենուր կան, սակայն ծիրան ու խաղող տեսնելիս նա միշտ հիշում եւ հիշեցնում է Հայաստանը.

Բայց երբ տեսնում եմ
Խաղող ու ծիրան,
Ինչո՞ւ հիշում եմ
Ես միշտ Հայաստան (2, 234):

«Օրորոցի երգում» դյուրազգաց երեխան ինչպես պետք է ընկալի երգեցիկ սոխակի, «արտ ու արոտ» չափչփող աբեղածագի, «ճարպիկ, գող, արծաթասեր» կաչաղակի, «քաջասիրտ, արի որսորդ» բազեի ռազմի երգերի իմաստները: Տղան չի քնում. մայրն «օգնության» է կանչում հիշյալ թռչուններին, որ «քուն բերեն տղայի աչքերին», բայց նա լալիս է, մերժում սոխակին, աբեղածագին, տատրակին, որոնց երգը կարող էր իրեն դարձնել տիրացու, աբեղա, սովդաքար-վաճառական կամ սգավոր: Դրանց ժամանակը չէ, այլ՝ թշնամու դեմ հերոսաբար մարտնչելու պահը: Բնական է, որ որդին պիտի ընդուներ միայն քաջասիրտ բազեի երգը.

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բազե,
Իմ որդին գուցե քո երգը կուզե...
Բազեն որ եկավ՝ որդիս լըռեցավ,
Ռազմի երգերի ձայնով քնեցավ (2, 262):

Օտարամոլ հայերի, մանավանդ երեխաների հանդեպ Պատկանյանն ուներ խիստ մերժողական վերաբերմունք: Հայ երեխան պետք է մայրենի լեզուն, մշակույթն ու պատմությունը, հայրենիքի աշխարհագրությունը անվրեպ իմանա: Դատապարտելի են այս ամենի հանդեպ անտարբերությունն ու խորթացումը, որ հայ մարդուն հեռացնում էին իր արմատներից ու նրան դարձնում ազգի համար անպիտան, նույնիսկ՝ ոչ մարդ: *«Վանիչկա»* բանաստեղծության մեջ մարդու այս տեսակը, որ գովաբանվում է տգետ շրջապատի կողմից, արգահատելի է իր անունով անգամ: Մայրենիից կտրված, ազգայինն արհամարհող, օտար լեզուներով ճամարտակող այս թութակը Պատկանյանի հակաիդեալն է.

Վանիչկային շատ են գովում,
Որ լավ աշակերտ է նա,
Որ ֆրանսերեն վարժ է խոսում,
Ճանաչում է Եվրոպա:

Բայց մայր լեզու՝ հայրենի–
Մեջը մունջ է ու տգետ.
Չի ճանաչում Հայաստանի
Ոչ մի քաղաք, ոչ մի գետ...

Ո՛չ մարդ, կըկու է քո Վանյան,
Որ սեփական չունի բուն,
Թութակ է քո գոված տղան,
Որ չի գիտե յուր լեզուն (2, 259):

Շարունակությունը՝ էջ 5

Բացառիկ Հայրապետը

Սկիզբը՝ էջ 3

Հոգեւոր երաժշտության բնագավառում Ներսես Շնորհալին մեծ բարենորոգիչ է թե՛ իր բուն ստեղծագործությամբ եւ թե՛ պաշտոներգության ծիսական կողմի բարեկարգությամբ: Նա կարգավորել է հայոց մինչ այդ այլայլված, աղքատացած պաշտոներգությունը, բարեձեւություն ու միակերպություն հաղորդել դրան, բազմապիսի ստեղծագործություններով ճոխացրել եւ, միաժամանակ, XII դ. համար արդեն հնացած մասերից ու ձեւերից մաքրել նույն պաշտոներգությունը՝ զետեղելով սեփական տաղանդավոր հեղինակությունները երկար ու ձիգ սաղմոսասացությունների փոխարեն: Ներսես Շնորհալին վերանայել է հայկական միջնադարյան ծիսական-երաժշտական բոլոր գրքերը. դրանցից մի քանիսը լրացրել հիմնովին»:

Ներսես Շնորհալի Հայոց Հայրապետը ի Տեր հանգավ է 1173 թ. օգոստոսի 13-ին Հռոմկլայում:

Չնայած վիթխարի տաղանդների մի ամբողջ աստղաբույլով օժտված լինելուն՝ Լուսավորչի գահի 64-րդ ժառանգորդը հավերժի զավակն է դարձել ընդամենը «Շնորհալի» պատվանմամբ. վերջինս ընդունված էր Կիլիկյան Հայաստանում՝ հատկապես Սեւ լեռան վանքերի դպրոցներում (ինչպես օրինակ՝ «Քերթողը»՝ Սյունյաց աշխարհում): Բացի «Շնորհալի» պատվանունից՝ Ներսես Դ հայրապետը մեծարվել է «երկրորդ Լուսավորիչ Հայոց», «եռամեծ վարդապետ», «երանաշնորհի սուրբ», «աղոթք Հայ Եկեղեցու եւ հայ հոգու», «տիեզերալույս վարդապետ», «համահրեշտակ» եւ այլ բնութագրումներով:

Հայ Եկեղեցու գաղափարական պայքարի զորավարներից էր Ներսես Կլայեցին, որ մինչեւ վերջ գաղափարական ճակատում կռիվ տվեց ի պաշտպանության իր Եկեղեցու ու իր հոտի: Գաղափարական զորավար լինելուց զատ՝ նաեւ շնորհալի դիվանագետ էր՝ եկեղեցական դիվանագետ:

Հայ Եկեղեցու ավելի քան մեկուկեսհազարամյա պատմության մեջ Գրիգոր Ա Լուսավորչից, Սահակ Ա Պարթեւից, Մեսրոպ Մաշտոցից եւ Գրիգոր Նարեկացուց հետո ոչ ոք այնքան մեծարանքի ու սիրո չի արժանացել ժամանակակիցների եւ գալ սերունդների կողմից, որքան Ներսես Շնորհալին՝ որպես սուրբ, հայրապետ եւ մատենագիր: Քահանայապետի ունեցած մեծ հեղինակության պերճախոս վկայություններից է այն, որ 1164 թ. նրան են ուղարկել հաշտեցնելու Կիլիկյան Հայաստանի երկու հայ իշխաններին՝ Թորոս Բ Ռուբինյանին եւ Լամբրոնի բերդի տեր Օշին Բ Հեթումյանին:



Շնորհալին ոչ միայն իր դարի կարկառուն դեմքն էր, դրա հզոր խորհրդանիշներից մեկը, այլեւ Նարեկացու, Մանուել եւ Տրդատ ճարտարապետների, Ռոսլինի եւ Պիծակի հետ ու նրանց նման այդ դարը կալացնողներից մեկը, վերազգային մի երեւույթ, ում հռչակը հատել էր հայ հոգեմտավոր կյանքի սահմանները՝ սփռվելով բոլոր ազգերի, անգամ՝ ոչ քրիստոնյաների մեջ: Հայոց Հայրապետն իր գիտական բացառիկ որակներով, աստվածաբանական պատրաստվածությամբ, առաքինահաստատ ընթացքով ու սրբակյաց վարքով արժանացել է միջեկեղեցական ճանաչման եւ համբավի: Նա համարվել է ավետարանական ոգով եկեղեցիների միության եւ համագործակցության ջատագով, Եկեղեցու մեծ վարդապետ համաքրիստոնեական մտքի եւ մշակույթի պատմության մեջ: Հույները, ասորիները եւ հռոմեացիները նրան նմանեցրել են III–V դդ. Եկեղեցու մեծ հայրերին, իսկ ժամանակի հունական եւ ասորական աղբյուրները նրան կոչել են «Նոր Գրիգոր Աստվածաբան»:

Ներսես Շնորհալին մեծարվել է ողջության օրոք, իսկ երկրային կյանքից հեռանալուց հետո նրա սուրբ շիրիմը դարձել է ուխտատեղի: Բոլոր ազգերի ու ժամանակների մեծագույն հոգեւոր գործիչներից մեկի մահը սգացել են բյուզանդական արքունիքն ու բովանդակ քրիստոնյա աշխարհը:

Ներսես Շնորհալին Հայ Առաքելական Եկեղեցու տոնելի սուրբ է. սուրբ Ներսես Շնորհալի հայրապետի հիշատակը տոնվում է Խաչվերացի հինգերորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը՝ «սրբոց թարգմանչաց վարդապետաց» հետ:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

Թումանյանի գործունեությունը Հայկական հարցի հոլովույթում

Սկիզբը՝ թիվ 23

Թումանյանը սեփական դիտարկումներով պարզել էր, որ հայ կամավորների հանդեպ դիտավորյալ չարակամ վերաբերմունքը բխում է վերեւներից եւ կրում կազմակերպված բնույթ:

Չնայած այդ ամենին, որ հայերի բարեկամ ռուսները բռնել էին չքողարկված հակահայկական դիրք, այնուամենայնիվ, բանաստեղծը չի տրվել խորին հուսահատությունից բխող անգործունակությանը, այլ փորձել է հակադրվել ու հակադարձել ճնշող հանգամանքներին եւ իրավիճակին: Հակառակն է տեղի ունեցել: Բանաստեղծը լրացուցիչ ուժ է ստացել հայրենի հողից ու ժողովրդից, որը ստեղծված անգամ ծանրագույն իրավիճակում մղել է անհավատալի լավատեսության եւ ակտիվության: Ազատագրված (թեեւ ավերված) տարածքներում բազմաթիվ հանդիպումներ է ունեցել ժողովրդական լայն խավերի հետ, ոգեւորիչ խոսքով հուսադրել շատերին: Թումանյանին մեծապես հետաքրքրել են արեւմտահայության կյանքի սոցիալական, կենցաղային, հոգեւոր-բարոյական կողմերն ու կնճիռները: Արեւմտահայկական բնակավայրերը հաճախ էին ձեռքից ձեռք անցնում եւ թալանվում թուրքերի, քրդերի եւ ռուսական կազակների կողմից: Այդ օրերին թալանն ու ավերն անընդհատ կրկնվող ու անընդմեջ երեւույթ էին: Այդպիսի իրավիճակի շուրջ են բանաստեղծի բազմաթիվ գրառումները պատերազմական գոտուց: Մեջբերենք այդ իրավիճակն այնքան դիպուկ բնորոշող սույն գրառումը. *«Սաստիկ հուզիչ էր էս գյուղում ու էս եկեղեցում, եւ չոքեցինք կիսավեր եկեղեցում, կիսամեռկ ժողովրդի հետ, թալանված սեղանի առջեւ ու թալանված քահանաները սկսեցին երգել – «Ապավինեցաք ի խաչ քո Քրիստոս...»: Ամենքիս էլ թվաց, թե առաջին անգամ եղանք թուրքահայ գյուղում եւ խորապես զգացինք էն ամենը, որ զգացել էինք մինչեւ էդ ժամանակները»* (ԳԱԹ, ԹՖ, №258, թ. 54):

Իր ժողովրդի իրական գողգոթան տեսած բանաստեղծն այսպիսի տողերով է այն վկայակոչում. *«Հարյուր հազարավոր փախստականներ են գալիս Թուրքիայից Իգդիրի վրայով Էջմիածին: Առայժմ վերջը չի տեսնվում շարան-շարան եկող այդ մասսայի, որը շարժվում է բարձրացած փոշու մեջ: Մեծամասնությունը կանայք եւ երեխաներ են, ուժից ընկած, հոգնած, սոված, բոբիկ: Նրանց պատմածները քրդերի եւ թուրքերի գազանությունների մասին լի են աննկարագրելի սոսկումով»* (Հովհաննես Թումանյան հանրագիտարան, Ե., 2020 թ., էջ 543):

Թումանյանն Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադաշտերում տեսավ իր ժողովրդի ոչ միայն ֆիզիկական, այլեւ հոգեւոր-բարոյական ոչնչացումը: Անզորությունից, իր ժողովրդի անելանելի վիճակից դառնացած բանաստեղծը չափածո քերթվածներում արտահայտեց հայության ապրած անհուն ողբերգության համապարփակ պատկերը.

Խըռնըվում են մըտքիս հանդեպ
բանակները անհամար,
Տըրորում են քո երեսը, քո
դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակները վայրենի,
Ավարներով, ավերներով,
խընջույքներով արյունի,
Որ դարձըրին քեզ մըշտական սեւ ու
սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով,
հայացքներով անժըպիտ,
Ողբի՜ հայրենիք,
Որբի՜ հայրենիք:



Իր ժողովրդի կրած մեծագույն ողբերգությունը խարխլեց ու ծանրացրեց բանաստեղծի առողջական վիճակը՝ հոգեկան վիթխարի ալեկոծություն առաջ բերելով եւ ցնցելով նրա ուղեղի եւ արյան բոլոր բջիջները: 1915 մահաբեր թվականի հուլիսին հասնելով Էջմիածին՝ գաղթականներին եւ որբերին օգնության՝ հետեւյալ գրառումն է կատարում. «Ես երբեք էսքան տխուր չեմ լսել Էջմիածնի զանգերի ձենը...» (*Հովհաննես Թումանյանի հայ դատը, Ե., 2010, էջ 25*):

Համազգային վշտի ու դժբախտության այդ դժնդակ տարիներին Թումանյանը բարոյական ու ֆիզիկական առումներով պատրաստ էր ամեն ինչի, միայն թե կանգ առնեին հայոց արյան գետերը եւ հայոց պատմական հայրենիքի ավերման գործընթացը: Եթե ֆիզիկապես անհնար էր, ապա բարոյապես նա գրկեց իր ժողովրդի՝ ծալվելու պատրաստ մեջքը:

Շարունակությունը՝ էջ 6

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ (1830–1892)

Սկիզբը՝ էջ 4

Պատկանյանի մանկական բանաստեղծությունները գերազանցապես դիդակտիկ-ուսուցողական բնույթ ունեն: Դրանք գրվել են երեխայի մեջ ուսման եւ գիտության հանդեպ սեր առաջացնելու նպատակադրմամբ: *«Գիտություն»* քերթվածը, օրինակ, մարդկային մտքի հրաշագործ ուժի փառաբանություն է, որով բանաստեղծ-մանկավարժը ջանացել է արժեւորել ուսումը եւ աշակերտներին նպատակամղել դեպի գիտություն: Գնահատելի է այն աշակերտը, որ քահանայից ավելի կրոն գիտի եւ տիրապետում է երկնքի, երկրի եւ ծովի գաղտնիքներին, «բերան գիտի» կենդանիների, սողունների, տունկերի անունները: Բայց կա ավելի զորավոր ու հրապուրիչ ուժ՝ «ուսում – գիտությունը», որ «մի րոպեում» կարող է հաշվել ծովի ավազներն ու ջրի կաթիլները: Այդ հրապուրիչ ուժին կատարելապես տիրապետելու համար երեխան պետք է անընդհատ վարժեցնի, ճկունացնի իր միտքը, արագորեն նկատի եւ վերացնի միտումնավոր պարադոքսային սխալները, որոնք գլուխկոտրուկի պես առաջացնում են առանձնակի հետաքրքրություն: Երեխայի ուշադրությունը սրելու եւ սխալներ գտնելու նրա կարողությունը զարգացնելու նպատակով են գրված *«Գտեք սխալները»* խորագրի տակ ամփոփված վեց քառատող բանաստեղծությունները, որոնց յուրաքանչյուր տողում կա նվազագույնը մեկ եւ ավելի մտքի ու տրամաբանական սխալ: Հայ գրականության մեջ սրանք նորություն էին բոլոր առումներով:

Ա բանաստեղծությունը կարդալիս ուշադիր երեխան կնկատի, որ ձմռանը բնորոշ չեն տաքն ու հեղձուկը, տղաների՝ շոգից հալումաշ լինելը, բլիթն ու լավաշը դաշտում չեն բուսնում, սեխը, բողկն ու ձմերուկը չեն լինում «ծառերից կախ-կախ»:

Բ քերթվածն ընթերցողն անմիջապես պիտի նկատի, որ օձը չի կարող վազել «մեծ-մեծ քայլերով», ուղտը՝ թռչել «ամպի տակերով», համր ձկները չեն կարող «տաղեր կլկլացնել», իսկ խուլ ու կույրերն էլ չեն կարող, նրանց լսելով, զվարճանալ ու սքանչանալ:

Գ քերթվածում հեղինակը երեխային առաջարկում է տրամաբանական ուրիշ սխալներ. արջը թռչուն չէ, որ բուն շինի «ծառի բարակ ճյուղին», ձու ածի եւ թուխս նստի, «ղողղան ագռավն» էլ կաթնասուն չէ, որ նույն ծառի տակին ծիծ տա իր՝ մանավանդ «գեղեցիկ ձագին»:

Դ քառատողն ընթերցողը պետք է անմիջապես հիշի, որ փետրվարը 30 օր չունի, արեւը հյուսիսից չի ծագում, ծծկեր տղան վազեվազ չի գալու, որ «պարտեզից հալվա քաղի»:

Ե քերթվածում եւս ներկայացված են անկարելի բաներ. առասպելական ինքնահրկիզվող փյունիկ թռչունի անտեսանելի փետուրը չի կարող գրիչ լինել, որով հեղինակը ձյունապատ դաշտից կտրված թերթի վրա իր պապի մեռած պապին նամակ գրեր:

Առավել տպավորիչ է *Զ* բանաստեղծության պարադոքսը, որը պատմական գիտելիքի հետ միասին «ստուգում» է երեխայի ուշիմությունն ու տրամաբանելու կարողությունը: Հայկը եւ Նապոլեոնը «սաստիկ կոշտ խոսքերով» բանակռվում են «մի գռոշի համար».

Հայկ ու Նապոլեոն մի գռոշի համար
Սաստիկ կոշտ խոսքեր ասացին իրար.
Հայկն ուներ հրացան, Նապոլեոնն աղեղ.
Ո՞վ հաղթեց: Անշուշտ մեր Հայկը ահեղ
(2, 269–270):

Պատկանյանի պոեմները

Առաջին շրջանում՝ 1850-ական թթ. են գրվել Ռ. Պատկանյանի *«Զարմայր նահապետի մահը»* (1850) *«Պանդուխտ հայ ի Փարեզ»* (1850), *«Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»* (1856), *«Դեւ Մրուս»* (1856), *«Քյոռօղլու»* (1859) ծավալուն չափածո ստեղծագործությունները, որոնց պայմանականորեն պոեմ են անվանում: Պայմանականորեն, քանի որ միայն ծավալը չափածո երկը պոեմ անվանելու թեեւ անհրաժեշտ, բայց դեռեւս բավարար պայման չէ, չնայած գրականության պատմությանը հայտնի են նաեւ փոքրածավալ պոեմներ, ինչպես Ռուբեն Սեւակի «Հայաստանը»՝ 6 տող, Եղիշե Չարենցի «Վահագնը»՝ 16 տող, Հովհ. Շիրազի «Էքսպրոմտը»՝ 6 տող եւ այլն: Պատկանյանը, իհարկե, ծանոթ էր Հոմերոսի, Նարեկացու, Գյոթեի, Պուշկինի, Լերմոնտովի ու եվրոպական այլ հեղինակների, հայ կլասիցիստների պոեմներին, նույնիսկ թարգմանություններ է կատարել օտար հեղինակների պոեմներից (Պուշկինի «Ոսկե ձկնիկը», Լերմոնտովի «Երեք արմավենին» եւ այլն), սակայն հայ նոր գրականության մեջ դեռեւս չէին ձեւավորվել այդ ժանրի կայուն ավանդույթներ, եւ օրինակելի նմուշներ դեռեւս չկային, ինչպես Թումանյանի պոեմներն են, ուստի նրա պոեմներն առաջիններից էին (նրանց նախորդել էին Միրզա-Վանանդեցու պոեմները, Բագրատունու «Հայկ դյուցազնը», Թաղիադյանի «Սոս եւ Սոնդիպին», Աբովյանի «Աղասու խաղը»), պատկերացում չկար այդ ժանրի տարատեսակների, նրանց կառուցվածքային, բովանդակային ու գեղարվեստական յուրահատկությունների մասին: Թերեւս այդ պատճառով էլ նա իր *«Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»* եւ *«Քյոռօղլու»* ստեղծագործությունները ժանրային առումով ոչ թե պոեմ է անվանել, այլ վիպասանություն՝ հավանաբար Պուշկինի «Եվգենի Օնեգին» չափածո վիպասանության օրինակով: Ինչպես տեսնում ենք, հեղինակն այս երկերից ոչ մեկը պոեմ չի անվանել, թեեւ նկատելի է՝ բոլորն էլ ստեղծվել են պատմահայրենասիրական հիմքով եւ իրենց բովանդակությամբ, գաղափարական ու գեղագիտական հարցադրումներով ուղղված են արդի երիտասարդությանը:

Քսանամյա պատանու առաջին պոեմը՝ *«Զարմայր նահապետի մահը»*՝ գրված դեռեւս անմշակ բանաստեղծական աշխարհաբարով, ընդամենը 144 տող է, պատկերում է հեռավոր հնադարի հայ քաջամարտիկներից մեկին՝ Մ. Խորենացու հիշատակած՝ Հայաստանի կողմից տրոյական պատերազմին 40 000 կտրիճներով մասնակցած, Աքիլլեսի դեմ կռված եւ նրա իսկ մահացու հարվածից խոցված Զարմայր նահապետին:

Արմավիրցի հայ զինվորը Իդա սարի հովտում՝ մռայլ ու խավար գիշերվա մեջ, այրիացող կնոջն ուղղված վերջին հրաժեշտի խոսքերը, հարազատներին եւ կարոտալի Արմավիրին ու Հայաստանին փոխանցվելիք հանձնարարականն է մրմնջում իր հավատարիմ սպիտակ նժույգին: Անձնավորված ձիու եւ մեռնող հերոսի այս հուզիչ երկխոսությունը բացահայտում է սխրանքներով լի մի կյանքի պատմություն. հեռուներում մնացած հայրենիքի եւ հարազատների հանդեպ բուռն կարոտի անմեկնելի զգացում: Մարտից հետո բյուրավոր զոհերին ու վիրավորներին փնտրում են հարազատները, մինչդեռ Աքիլլեսի հարվածից մահացու խոցված հայ հերոսը մնացել է միայնակ ու անօգնական: Իզուր են հավատարիմ նժույգի՝ իր մեջքին բարձրանալու եւ Հայաստան հասնելու հորդորները: Օրհասական վիճակում նա այլեւս անկարող է ձի նստել, եթե նույնիսկ պատրաստակամ նժույգն իր ոտքերը տարածի, մեջքը կռացնի եւ բերանով ու ատամներով օգնի նրան: Անտեր ձին միայնակ պիտի վերադառնա Հայաստան եւ Զարմայր նահապետի կնոջն ու մյուս հարազատներին գուժի նրա հերոսական մահը.

Ասա՛ նըրան, իմ սիրական սպիտակ ձի,
Թե քո մարդը փեսայի պես պառկեցավ,
Հարսանիքն էր Իդա լերան հովտաց մեջ,
Հարսնարանը դիակներով զարդարված...
Մատանին էր լայնաբերան գեղարդը,
Հարսնացուն էր անհաղթելին Աքիլլես,
Փեսավերն էր հին բարեկամ Մեմնոնը,
Եվ հարսնաքույր՝ Պանթագեղե Ամազոն
(2, 10) ...

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԸ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ



Սկիզբը՝ թիվ 18–23

Տեսարանի լարման գագաթնակետը Թոթովենցը մարմնավորել է անթերի թատերական պատկերով. Իսխելը մատուռից հանել է սկիհը, արհամարհական արտահայտությամբ մոտենալով Հաջի Չելեբուն ու բարձր հռհռալով՝ թքել է նրա մեջ՝ անպատվելով նրա մարդկային ու կրոնական զգացմունքները: Իսկույն հետեւում է Հաջի Չելեբու շառաչուն ապտակն Իսխելի դեմքին: Թոթովենցը մեծ վարպետությամբ, թատրոնի յուրահատկությունների մեծ ըմբռնումով այդ ապտակը դարձնում է գործողությունների զարգացման ու ծավալման ազդակ:

Ապտակը դրաման տեղափոխում է խիստ անձնական հուն, ներքին էությամբ՝ մարդկային բուռն կրքերի դաշտ: Այդ արտաքիններքին շարժումներից հյուսվում է իսկական դրամատուրգիական գործողություն՝ գլխավոր հերոսներին առնելով արագորեն բարձրացող շրջապտույտի մեջ:

Հրեան պետք է վրեժ լուծի Հաջի Չելեբուց ապտակի համար. հասարակության եւ ընտանիքի աչքում խայտառակվել են նրա անունն ու արժանապատվությունը: Իսխելն սկսում է մտածել դավադրության մասին՝ Հաջի Չելեբիին գլխատելու համար: Իսխելը՝ դավադրության վարպետը, մի հնար պիտի գտներ: Բայց միեւնույն ժամանակ շատ լավ գիտակցում էր, որ Հաջի Չելեբուն անհնար է առեւտրական զեղծարարության մեջ մեղադրել. նա Ստամբուլում ամենախորամանկ ու ամենավարպետ մարդն էր: Նրան պետք էր ամբաստանել ճշմարիտ կրոնի դեմ հայհոյած եւ գործած լինելու մեջ՝ ասելով, որ նա մեղսակից է կաթոլիկ պաշտամունքի եւ այդպիսի մի մատուռ էլ տանն ունի: Իսխելը գումարով մի վկա պիտի գտներ, որը պիտի պնդեր, թե տեսել է՝ ինչպես է Հաջի Չելեբին, իբրեւ կրոնական վրեժխնդրություն, գնացել Այա-Սոֆիա եւ կեղտոտել Այա-Սոֆիայի շենքի վրա:

Չելեբին լավ է ճանաչում նրա վրեժի թույնը: Նա ձգտելու է վերջ տալ իր կյանքին, գուցե նաեւ վտանգ սպառնա նաեւ ընտանիքի անդամների ու հարազատների կյանքին: Օգտագործելով իրենց քրիստոնյա լինելու հանգամանքը՝ Իսխելը կարող է հեշտությամբ հագուրդ տալ իր վրեժխնդրությանը: Երբ վրիժառությունը փոխադարձ է, բախումը դառնում է ավելի էական ու կարեւոր: Գրողը ներկայացնում է հերոսների գործողությունների զարգացման շրջանակ: Այդպես դրամատուրգը կերպարների հատկանիշները բացահայտում է փոփոխությունների ու զարգացման մեջ: Իսխելի ներքին, օրգանական դրաման թափանցում է հոգեբանության խոր շերտեր, այնինչ Չելեբու կերպարն ստեղծվում է դրամայի գործողությունների ծավալման շնորհիվ: Թոթովենցը մեծ վարպետությամբ է ցուցադրել հերոսի կայացման ամբողջ բարդ ընթացքը: Իսխելը պատրաստ է վրեժ լուծելու համար նույնիսկ ամբողջ հարստությունը վատնել կամ էլ նույնիսկ տալ դստերը՝ Զիլֆային, կնոջը՝ Թագուհուն: Իսխելի մոլեգնությունը գազազեցնում է հարազատներին: Երբ դուստրն առաջարկում է սպանել Հաջի Չելեբու աղջկան, Իսխելը մերժում է, քանի որ այդ արարքը չէր լուծի նրա վրեժը:

Իսխելը չի տառապում մարդկային կասկածանքներից, նա հանդես է գալիս որպես տիպական մի կերպար, որը դրամայի գործողությունների ընթացքում ձեռք է բերում բնավորության մի շարք գծեր: Մյուս կողմից՝ Չելեբին պայմանավորում է դրամայի գործողությունների ընթացքն այն դեպքում, երբ Իսխելը դրանց ընդամենը մասնակից է, գործող անձ: Թոթովենցը մեծ վարպետությամբ է ներկայացրել հերոսի կայացման ողջ ընթացքը՝ մարդկային, քաղաքացիական, կրոնական ըմբռնումների բախումով, զգացմունքների եւ կասկածանքների ներքին հակամարտությամբ: Տռուզյանների հարսը չի հավատում, որ ինչ-որ մեկը կհանդգի Իսխելից վրեժ լուծել, իսկ ամբարիշտ Իսխել հրեան դեռ ձգտում է իրագործել իր նպատակները:

Արագընթաց սյուժետային գիծը զարգանում է խիստ ինքնատիպ ձեւով. հանգուցային կոնֆլիկտը լուծվում է սոցիալ-հոգեբանական այլ հարցերի դիտանկյունից: Սուլթանական կայսրության հիմքերը խարխլվում էին: Ինչպես խոստովանում է մեծ վեզիրը, ահավոր սպանությունները, կողոպուտն ու հափշտակությունները կատարվում էին օրը ցերեկով:

Համապատասխան մթնոլորտ նախապատրաստելով՝ դրամատուրգն իր հերոսների արարքներին տալիս է լայն հիմնավորում, բացահայտում է գլխավոր կոնֆլիկտի սոցիալական արմատները: Գրողը յուրովի է մեկնաբանում հատկապես Իսխելի ու Հաջի Չելեբու կերպարները:

Հաջի Չելեբու ապտակը վառում է Իսխելի դեմքը. նա Հալետից պահանջում է իրեն անարգողի գլուխը. չէ՞ որ ինքը երեսուն տարի ծառայել է Հալետին, հարթել նրա առաջ ցցված խոչընդոտները, հարստացրել նրան, իր ճանկերով փորել է տասնյակ հորեր՝ թաղելու համար Հալետի անձնական թշնամիներին: Կրել է թուք ու մուր, վիրավորել իր ցեղային արժանապատվությունը եւ այլն:

Վրեժխնդրության կիրքը կուրացնում է Իսխելին: Վրեժի նույն մոլեգին զգացմունքն է թագավորում Հաջի Չելեբու ներսում: Եթե Իսխելն իր ամբողջ կյանքն է դնում՝ վրեժը լուծելու համար, ապա Հաջի Չելեբին փոխում է կրոնը: Իսխելը դավադրում եւ սպանել է տալիս հայ ամիրաներին:

Շարունակությունը՝ էջ 7

Թումանյանի գործունեությունը Հայկական հարցի հոլովույթում

Սկիզբը՝ էջ 5

Թումանյանի վերաբերմունքն ու դիրքորոշումը մեր ժողովրդի հակառակորդների եւ թշնամիների հանդեպ ճիշտ այնպիսին էին, ինչպիսին էր զորավար Անդրանիկի մոտեցումը: Անդրանիկը նույնպես պատերազմի բոցերի մեջ հասկացավ, որ ռուսաց տերության համար Հայաստանն ընդամենը աշխարհագրական հասկացություն է, եւ այն միջանցք է դեպի Միջերկրականի ափերը: Ցարական գեներալներին ապտակող Անդրանիկն զգաց, որ ռուսական զորքերի կեղծ նահանջներն արվում են այն նպատակով, որ հայաթափվի Արեւմտյան Հայաստանի տարածքը: Թումանյանն ու Անդրանիկն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ամենից շատ էին վրդովված ու վշտացած կատարվող իրադարձություններից:

Ցարիզմը թույլ չտվեց, որ ազատագրված տարածքներում նորից վերընձյուղվի հայոց պետականության սաղմը:

1915 թվականի ապրիլ–մայիս ամիսներին ծավալված Վանի փառահեղ դյուցազնամարտի պսակը եղավ Վան-Վասպուրականի հայկական նահանգապետության հիմնադրումն Արամ Մանուկյանի գլխավորությամբ: Օսմանյան դարավոր տիրապետության լծից ազատագրված Վանի բնակչությունը 1915 թվականի հունիսի 12-ին չտեսնված խանդավառությամբ, ծափերով ու ծաղիկներով է դիմավորում ամենայն հայոց բանաստեղծին, նրա մուտքը հայոց քաղաքակրթության օրրան Վան:

Վանեցիներն իրավամբ նրան համարում էին «երիտասարդության դաստիարակ ու մարգարե, պայքարի առաքյալ ու ազատության գուշակ» (*նույն տեղում, էջ 21*):

Սակայն Վանին վիճակված չէր երկար ժամանակ վայելել իր ազատությունը: Ընդամենը մեկ ամիս անց Վանն ընկավ: Արեւմտյան Հայաստանի ողջակիզումը տեսած բանաստեղծն ու ազգային գործիչը բովանդակ ջանքերով, համակ էությամբ փորձեց ամրապնդել Արեւելյան Հայաստանի ու արեւելահայության պաշտպանության ու պահպանության ճակատը:

Բանաստեղծը շարունակում էր մաքառել, պայքարել ու դիմադրել:

1917 թ. դեկտեմբերի 22-ին իր զինական ուժերով արդեն Արեւելյան Հայաստանում հանգրվանած զորավար Անդրանիկը հրապարակում է զգաստության եւ միասնության կոչը՝ ուղղված համայն հայությանը:

Թումանյանն առաջինն է արձագանքում Զորավարի կոչին, եւ հաջորդ օրը հրապարակվում է բանաստեղծի պատասխան նամակը. *«Սիրելի Անդրանիկ. ահավոր մոմենտի առջեւ ամեն մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի ինչ որ ունի եւ կարող է՝ թե վերահաս վտանգը կանխելու, եւ թե բաղձալի խաղաղությանը հասնելու համար: Ես չորս տղա ունեմ, չորսն էլ երկրի կառավարության, Ազգային խորհրդի եւ քո տրամադրության տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ ընդունակ լինեն: Ես էլ անշուշտ սրանից թանկ ոչինչ չունեմ, հետեւաբար ոչինչ չեմ խնայել միայն թե կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների եւ ազատասեր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը եւ պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունները»* (*նույն տեղում, էջ 41*):

Ասված է հակիրճ ու դիպուկ, ամեն ինչ իր մեջ խտացնող եւ ամփոփող:

1918 թվականը բախտորոշ մի շարք իրադարձություններ բերեց, որոնց կիզակետում կանգնած էր ինքը՝ ամենայն հայոց բանաստեղծն ու ազգային գործիչը: Լինել-չլինելու հարցականն անողոքորեն կախված էր հայ ժողովրդի գլխին: Թուրքական բիրտ ներխուժումը դեպի Անդրկովկաս՝ 1918 թ. գարնանը, արդեն վտանգի տակ էր դրել բուն Արարատյան դաշտի հայության, Էջմիածնի ու Երեւանի գոյությունը: Թշնամին շարժվեց դեպի Լոռի: Թումանյանը երբեք չվախեցավ թշնամու՝ իր ծննդավայրին այդքան մոտիկ գտնվելու հանգամանքից, ոչ էլ նրա կատարած դաժան բարբարոսություններից: Այդ դժնի ու մահաբեր պահին նա ամուր ու անսասան կանգնած էր հայրենի հողին եւ իր հայրենակիցներին հղեց հետեւյալ կոչն ու հորդորը. *«Լոռեցիներ, իմ քաջ հայրենակիցներ... Հավաքվեցեք մեր մութ անտառների նման, կանգնեցե՛ք անսասան մեր սարերի նման, կրակ թափեցեք եւ զարկեցեք մեր սարերի կայծակների նման: Թո՛ղ թշնամին էլ տեսնի, աշխարհքն էլ, որ կարելի է Էրզրումի վրից էլ անցնել, Ղարսի վրից էլ, բայց Լոռու սարերից չի կարելի: Սպասում եմ ձեզ»* (*նույն տեղում, էջ 45*):

Սա ոչ միայն կոչ էր, հորդոր, նախազգուշացում, այլեւ՝ ավելին: Մեծ քաղաքացին ու բանաստեղծը պատրաստ էր ոչ միայն խոսքով ու ոգով, այլեւ ֆիզիկապես անձամբ ստանձնել ժողովրդական դիմադրության գործն ու առաքելությունը:

Մեր երկրի, Հայկական հարցի հետ առնչվող հետագա իրադարձություններում (ընդհուպ մինչեւ իր ծանր հիվանդությունը) Թումանյանը միշտ գտնվելիս է եղել առաջնագծում, ունեցել աչքի ընկնող դերակատարություն:

Այս ամենը լիիրավ կերպով հիմք է տալիս պնդելու, որ Թումանյանն ու Հայկական հարցը անքաքտելի ու անբաժանելի են, որ բանաստեղծն իր ողջ կյանքի ընթացքում գործել է ի նպաստ Հայ դատի:

Ինչ ուներ բանաստեղծը, ինչ կարողություն ու ընդունակություն, բոլորն ու ամեն ինչ նպատակաուղղեց հօգուտ եւ ի նպաստ հայոց պատմական ճակատագրի:

Այդ ճանապարհին ունեցավ նաեւ անձնական ծանրագույն կորուստներ: Առաջին համաշխարհային պատերազմի զոհ դարձան փոքր եղբայրը՝ Արտաշեսը, եւ որդին՝ Արտավազդը:

Ցավը մեծ էր, կորուստը՝ անդառնալի ու անդարմանելի:

Այդ ամենի հետ եւ ամենից շատ նա ապրեց իր ժողովրդի ողջակիզման, հայրենիքի ավերման եւ հայրենազրկման սոսկալի իրողությունը:

Բանաստեղծը քաջ գիտեր, որ Հայկական հարցը համայն հայության, ողջ հայ ժողովրդի պատմական ճակատագրի հարցն է եւ առաջացել է այն օրվանից, ինչ վտանգվել են «հայ ժողովրդի կյանքը, գույքը, պատիվն ու կուլտուրական զարգացումը» (*Թումանյանը եւ հայոց պատմական ճակատագիրը, Ե., 2000 թ., էջ 9*): Թումանյան մեծանուն այրն իրենից կախված ամեն ինչ գործադրեց Հայկական հարցի դրական լուծումն իրական դարձնելու համար, սակայն ապարդյուն:

Պատմությունն ուրիշ՝ այլ ժամանակների համար է վերապահել Հայկական հարցի լուծումը:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Ստեփան Զորյանի «Տխուր մարդիկ» պատմվածաշարը

Սկիզբը՝ թիվ 23

Զորյանը մեծ մարդասիրությամբ է կառուցում իր նյութը՝ ցույց տալով, որ միջավայրն իր անմիջական ներգործությունն է ունենում մարդու ձգտումների, կենցաղավարության վրա: Այդ պատմվածքներն սկսվում են էական նշանակություն չունեցող փաստերի նկարագրություններով. գրողը նկատելիորեն կարեկցանք է դրսեւորում դրանց նկատմամբ: Նա ներկայացնում է մեծ աշխարհում ապրող «փոքր մարդկանց փոքր աշխարհը»: Այս գրքի մասին Նար-Դոսն է իր դիտողությունն առաջադրում՝ գրելով. «Քո գործերում առայժմ կա պարզ մարդկանց հոգեբանություն: Ես դեմ չեմ դրան, պարզ մարդիկ սիրելի են: Բայց պետք է ձգտել ներկայացնելու մարդկային հոգու ավելի բարդ վիճակներ: Գրողը պետք է միշտ պրպտի մարդկային հոգու մութ խորշերը, ծալքերը եւ հայտնագործություններ անի…» (*Ստ. Զորյան, Երկերի ժող., h. 10, Երեւան, 1964, էջ 101*):

Յուրաքանչյուր գրող ունի, իհարկե, գրելու, աշխատելու իր եղանակն ու սովորույթը: Ոմանք (խոսքն արձակագիրների մասին է) կազմում են մանրամասն պլան, հերոսների անվանացանկ եւ նոր նստում գրելու: Զորյանը բազմիցս նշել է, որ փորձել է, անգամ պլան կազմել, բայց չի կարողացել հետեւել դրան: Նա ենթարկվում է նյութի զարգացման՝ գործողության մտածողությանը, նույնիսկ հաճախ չի էլ նախատեսել հաջորդ պարբերությունը կամ այն, թե մի քանի րոպե հետո ինչ կասի այս կամ այն հերոսը: Հեղինակը գրելիս չի գործածում որեւէ գրգռիչ բան, ինչպես անում են ոմանք: Նա գերադասում էր գրել առավոտները, երբ նոր բացվող օրվա հետ գլուխն ազատ է օրվա տպավորություններից, լրագրական լուրերից եւ այլն:

Պատմվածաշարի «Բարեկամներ» պատմվածքում ներկայացված է միայնակ մարդու տխուր կենցաղավարությունը: Պատմվածքի հենց սկզբում ներկայցված է ձմռան գեղեցիկ բնապատկեր.

«Ձյուն է գալիս…

Սպիտակ փաթիլները, ինչպես խնձորենու ծաղկաթերթեր, դողալով ու երկյուղած իջնում են տանիքների վրա, մարդկանց գլխին, ուսերին, ձիերի մեջքին, ծառերի ճյուղերին ու հեռագրաթելերին, եւ գիշերային թիթեռների պես պտտվում վառված լապտերների շուրջը» (*Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, առաջին հատոր, Երեւան, 1960, էջ 9*):

Ծեր Պողոսի կյանքի միակ ուղեկիցը մորից ժառանգություն մնացած Վանա կատուն էր: Նա չէր դժգոհում իր ապրած կյանքից: Ծերունին հաշտվել էր իր անզոր վիճակին եւ նույնիսկ չէր փորձում բովանդակություն տալ իր միօրինակ կյանքին: Նկատելի է, որ հեղինակն անթաքույց կարեկցանք է զգում այս հերոսի նկատմամբ: Նա մերժված է եւ առանձնացված կյանքից, մարդկանցից: Մենք նրան չենք տեսնում այլ մարդկանց հետ շփումներում, փոխհարաբերություններում: Միակ կենդանի շունչը կատուն էր, որի հետ խոսում, իսկ երբեմն էլ կռվում էր:

Զորյանի գեղարվեստական ճաշակի եւ դավանանքի ձեւավորման մեջ մեծ է եղել Հովհաննես Թումանյանի դերը: Ժողովուրդն է եղել Զորյանի ստեղծագործական ձգտումների ներշնչանքի աղբյուրը: Ժողովրդի նվիրական հույզերն ու մտորումներն է նա վերածել գեղեցիկ արվեստի, ուստի եւ նվաճել ժողովրդի խոր հիացմունքն ու սերը: Ժողովածուի ստեղծման պատճառը, Զորյանի կարծիքով, կյանքի փոփոխություններն էին, մասամբ՝ ժամանակի պահանջը: Նա փորձում էր այդ ստեղծագործությունների միջոցով հասարակության ուշադրությունը հրավիրել տիրող իրավիճակի վրա՝ հուսալով, որ իր արվեստի միջոցով կարող է հասնել հասարակության արժեհամակարգի փոփոխությանը:

Իր առաջին գրքի վերնագրի առթիվ Ստեփան Զորյանն օրագրում նշում է. «…Ես գիրքս անվանել եմ «Տխուր մարդիկ», որովհետեւ նրա հերոս-պերսոնաժներից շատերը իրոք, որ տխուր են իրենց կյանքի դժբախտ պայմաններով…» (*Ստեփան Զորյան*, *Ինքնակենսագրական նոթեր, Երեւան 1957 թ., էջ 30*): Հետագայում հեղինակի առաջին՝ «Տխուր մարդիկ» գիրքը նույն վերնագրով տեղ է գտել նրա երկերի ժողովածուներում՝ որպես պատմվածքների շարք: Գրողը որոշ չափով փոխել է շարքի կառուցվածքը, ավելացրել է մի քանի պատմվածք, իսկ սկզբնական կազմից մի քանիսը տարել այլ շարքեր: Գրքում զետեղված ստեղծագործություններից շատերն արժանացել էին հանրության բարձր գնահատանքին, մասնավորապես՝ «Բարեկամներ» պատմվածքը, որը Զորյանը գրել է 1916 թ.: Առաջին անգամ տպագրվել է «Մշակ» օրաթերթում 1916 թ., ապա հեղինակի «Տխուր մարդիկ» գրքում՝ 1918-ին: Թարգմանվել է նաեւ ռուսերեն, լիտվերեն, լեհերեն, գերմաներեն (*Սովետահայ գրականության պատմություն, առաջին հատոր, Երեւան, 1961, էջ 85*):



Զորյանը ցավում է «Տխուր մարդիկ» ժողովածուի հերոսների համար, բայց միաժամանակ մերկացնում այդ մարդկանց աշխարհը, աշխարհընկալումը, թուլությունները, նրանց դիմազրկությունը: Նա հեռու է նրանց իդեալականացնելուց: Գրողը ոչ միայն չի հիանում նրանց վարքագծով, այլեւ բարի հումորով քննադատում է այդ խեղճությունը, նրանց կյանքի գորշությունն ու նպատակների ողորմելիությունը: Չեխովի՝ ոչ մեկին չմեղադրելու եւ ոչ մեկին չարդարացնելու գրական սկզբունքը հատկանշական է նաեւ Զորյանի արձակի համար:

Զորյանը ոչ թե քննում է միայնության զգացումի հոգեբանական նախադրյալները, այլ սոցիալական խոր բովանդակություն է դնում այդ գրվածքի հիմքում: Պատմվածքներում ներկայացված են շահամոլության եւ խարդախության, դաժանության եւ կեղծավորության համար «ծեծված» մարդկանց տարբեր տեսակներ: Զորյանի այսպիսի հերոսներից են օրիորդ Մարիամը, ամուրի հաշվապահը, որը մի կատակի պատճառով իր կյանքն ավարտում է կախաղանով, ծեր գործակատար Պողոսը, որի միակ ընկերը կյանքում մորից ժառանգություն մնացած կատուն է: Նրանք լքված են, կյանքից մերժված, համակերպվում են իրենց գոյության հետ կամ, լավագույն դեպքում, պաշտպանվում միջավայրից, որը մեկին հասցնում է ծայրահեղ հուսահատության, մյուսին՝ մղում գտնելու կյանքն իմաստավորելու, մարդու գոյությունը պատճառաբանելու, մարդկային ապրումները դրսեւորելու յուրահատուկ միջոցներ: «Ջերմաչափը» պատմվածքի հերոսը՝ դպրոցի խոհարար պարոն Կարապետը, ամեն ինչ «կարգ ու կանոնի» մեջ դնելու իր վարքագծով ուղղակի չարիք է դարձել շրջապատի համար: Ստ. Զորյանը խտացնում է պահպանողական հոգեբանության բնորոշ գծերը:

«Ջերմաչափը», «Հոգաբարձուն» պատմվածքները վերարտադրում են կյանքի ծանրությունը, մարդկային էության խեղաթյուրումը, բարքերի ապականությունը, որոնցով հարուստ է Զորյանի նկարագրած միջավայրը: Չի կարելի թերագնահատել սոցիալական հարցերի նշանակությունը: Զորյանն առաջ է շարժվում արվեստի չեխովյան սկզբունքներով՝ չբարձրացնելով իր ձայնը:

Զորյանի պատմվածքի հերոսներն իրենց մասին չազդարարող, աննկատ, պարզ ու անհավակնոտ մարդիկ են: «Մանուկներ» պատմվածքում նուրբը եւ դաժանը, գեղեցիկը եւ սարսափելին միասնական գոյության մեջ են: Այս սովորական պատմությունը, որ զուրկ է գործողությունից, դառնում է իրականության ճշմարիտ պատկերը՝ լի ցավերով, եւ գեղեցկությամբ:

Շարունակությունը՝ էջ 8

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԸ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ

Սկիզբը՝ էջ 6

Չի բավարարվում իր այդ քայլով եւ ցանկանում է նաեւ տեր կանգնել նրանց ունեցվածքին: Այդքանից հետո, բնականաբար, ոչ ոք չէր հավատում արդարությանը: «Սուտ է, մայր, ամեն ինչ սուտ է, եւ աստվածը, եւ նրա պատվիրանները: Այդպիսի՞ ոճիր: Օսմանյան կայսրությունը չի ունեցել նման հավատարիմ ծառաներ, ինչպես իմ ամուսինը եւ տագրերը: Գլխատեցին նրանց» (*նույն տեղում, էջ 282*),— մտահոգվում է սպանված Տռուզյաններից մեկի այրին:

Մեծ վեզիրը դժգոհում է կայսրությունում տիրող վայրագություններից: Անտանելի է կայսրության դրությունը. ահավոր սպանություններ, օրը ցերեկով կողոպուտներ եւ հափշտակություններ: Մայրաքաղաքը դարձել է մի իսկա պոռնկանոց: Մայրաքաղաքի բնակչության իննսուն տոկոսն արտադրում է ճարպ, կիրք եւ կղկղանք, հարբեցողություն, շվայտություն եւ շռայլություն:

Հալետ էֆենդու փողասիրության մասին շատերը գիտեին, բայց նաեւ գիտեին, որ Տռուզյանները մեղավոր չեն, իսկ սուտը միշտ քաղցր է լինում, դրա համար էլ այն սիրում են մարդիկ. «Սխալ է, որ մարդիկ սիրում են ճշմարտությունը… Մարդիկ սիրում են սուտը, սուտը ատամներ չունի, սուտը քաղցր է, դուրեկան, սուտի մեջ ոչ մի ցավ չկա…: Ճշմարտությունը անողոք է, մի՜ եղեք անողոք» (*նույն տեղում, էջ 295*):

Եւ Իսխելի, եւ Հաջի Չելեբու մոլի կրքերը զանազան դրսեւորումներ են ստանում: Նրանք դիմում են ստորաքարշության, շողոքորթության, կեղծում են, խաբում՝ միայն հագեցնելու համար անասնական այդ կրքի ծարավը: «Ռեալիզմի շաղախով ֆեոդալական բութ նախապաշարումների, կույր էգոիզմի մերկացումն է դա» (*Ս. Արզումանյան, Վահան Թոթովենց, էջ 174*),— բնորոշում է Ս. Արզումանյանը:



Դրամայում լիարժեք բնութագրումներով պատասխաններ են տրվում մի շարք կենսական հարցերի: Ամիրայի ու սեղանավորի կոնֆլիկտը սոսկ անձնական բնույթ չի կրում: Վրեժխնդրության մոլուցքը, մարդկային կրքերը ցուցադրելուց շատ՝ դրամատուրգը ներկայացնում է կրոնական ու դասային ներհակ պայքարը: Թոթովենցն իրար հաջորդող, մեկը մյուսից ուժեղ պատկերներում ներկայացնում է արքունի ծանր մթնոլորտը, վերնախավերի կենցաղը: Յուրաքանչյուր գեղարվեստական պատկեր մեծ հետաքրքրություն է առաջ բերում սպասվելիք գործողությունների նկատմամբ:

Ապտակի խայտառակությանը ենթարկվելուց հետո Իսխելը, մոռացած ամեն ինչ՝ աշխատանք, ընտանիք, հարստություն, իրեն ամբողջովին նվիրում է Չելեբուց վրեժ լուծելու մոլուցքին, ստեղծում է գործողությունն իր էությունից բխող կեղծիքի ու ամբաստանության հիմքով: Նա կաշառված, կեղծ վկաների միջոցով փորձում է սուլթանին համոզել, որ Հաջի Չելեբին հայհոյել է իրենց կրոնը, կեղտոտել Այա-Սոֆիայի շենքի վրա, որպեսզի նրանից ստանա հայի գլխատման հրամանը: Երբ դա չի հաջողվում Չելեբու նախապահպանական քայլի՝ կրոնափոխության պատճառով, նա գործարք է կնքում ստոր վաճառական Հալետի հետ՝ արտասահմանից նրա ներմուծած կեղծ ոսկին իր անունով ներկայացնելու դիմաց ստանալու Հաջի Չելեբու գլուխը: Այս գործի մեջ, սակայն, երկուսն էլ այրվում են:

Մինչ Իսխելը կհասցներ սուլթանի առաջ վարկաբեկել Հաջի Չելեբիին, վերջինս Շեյխ-ու Իսլամի հետ այցելում է նրան: Հաջի Չելեբին չի ընդունում մեծամեծ պաշտոնները՝ արքունի գանձարանի պետ, Անգլիայի դեսպան եւ այլն, որոնք նրան է առաջարկում սուլթանը: Հաջի Չելեբին պարզապես սուլթանից խնդրում է իրեն նշանակել մաքսատան վերատեսուչ, որ կկարողանար վերահսկել կայսրության արտահանումներն ու ներմուծումները: Սուլթանը զարմանում է Իսխելի առաջարկից, այնուամենայնիվ, նրան նշանակում է արքունի գանձարանի պետ եւ խոստանում նրա ընտանիքին անձեռնմխելի թողնել միայն մի պայմանով, եթե Իսխելը թողներ իր ընտանիքն ու մուսուլման կնոջ հետ ամուսնանար:

Այդպիսով՝ Հալետն ու Իսխելը չեն հասցնում ավելի շուտ գալ սուլթանի ապարանք եւ փորձել վարկաբեկել Հաջի Չելեբուն: Սուլթանը գոռգոռում է նրա վրա, եւ Իսխելը հայտնվում է ծիծաղելի իրավիճակում: Բոլորը խոսում են Հաջի Չելեբու հավատափոխության մասին: Կրոնի համար Իսխելին ապտակած մարդը նույն գիշեր հավատափոխ էր եղել, եւ դա շատերի համար զարմանալի էր: «Հոգի չկա, աղջիկս, միայն կիրքը գոյություն ունի մարդկային ներաշխարհում: Կիրքը բնական է եւ հավիտենական: Նա հանդես է գալիս մարդու մեջ զանազան ձեւերով: Կրոնը մարդկային կրքի մի գործոնն է: Ես հարգում եմ կիրքը մարդու մեջ, ջանա, որ չկորցնես քո արժանապատվությունը: Արժանապատվությունն էլ կիրք է» (*նույն տեղում, էջ 308*):

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Երեւանի պետական համալսարանի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմահայրենասիրական, զորահավաքային եւ թիկունքային աշխատանքներին

Սկիզբը՝ թիվ 16–23

Արցախյան ազատամարտում, որ կենաց եւ մահու կռիվ էր հայ ժողովրդի համար, հաղթեցին հայի կամքն ու ոգին, միասնությունն ու ժողովրդի հավաքական ուժը, որոնց կրողներն էին նաեւ համալսարանականները: Նրանցից շատերը, ընդունելով թշնամու մահաբեր գնդակը, իրենց արյամբ գծեցին Արցախի սահմանները:

Շատերն էլ, ապրելով պատերազմում հաղթողի բերկրանքը, վերադարձան խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի: Յուրաքանչյուրն իր մասնագիտական ոլորտում անմնացորդ նվիրվեց այս անգամ արդեն մեր երկրի տնտեսության, կրթության ու գիտության, մշակույթի զարգացման գործին՝ միշտ պատրաստ հարկ եղած դեպքում կրկին կանգնելու հայրենիքի պաշտպանության դիրքերում: Հայ զինվորն ու համալսարանականները աչքի ընկան նաեւ թշնամու կողմից սահմանամերձ շրջաններում կազմակերպված դիվերսիոն հարձակումների ժամանակ: ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետի ուսանող Ազատ Ասոյանն ընկավ քաջի մահով՝ 2014 թ. թշնամու դիվերսիոն խմբի հարձակման հետեւանքով: Նա հետմահու պարգեւատրվել է ՀՀ մարտական ծառայության եւ ԼՂՀ «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով, իսկ 2015 թ. ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվեց նրա անունով:

ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող Գոռ Դարմանյանը 2015 թ. իր ջոկի հետ կասեցրեց թիկունք ներթափանցած հակառակորդի դիվերսիոն հետախուզական խումբը, ծանր վիրավորվեց, ապա ապաքինվեց եւ ցուցաբերած քաջության համար պարգեւատրվեց ՀՀ «Արիության» եւ ԼՂՀ «Արիության համար» մեդալներով:

Արցախյան ազատամարտից 22 տարի անց՝ 2016 թ. ապրիլի 1-ի՝ լույս 2-ի գիշերը, Ադրբեջանը խախտեց զինադադարը եւ անցավ հարձակման՝ փորձելով շրջել պատմության անիվը, սակայն հաշվի չառավ, որ հայ զինվորը հանուն հայրենիքի միշտ էլ ընտրում է մահ իմացյալը: Ապրիլյան մարտական գործողությունների ընթացքում հայ զինվորն իր քաջությամբ ու անկոտրում ոգով, դիմակայելով ադրբեջանական հատուկ ստորաբաժանումների հարձակմանը, հօդս ցնդեցրեց թշնամու ծրագրերը: Դժբախտաբար, անհավասար մարտերում նորից ունեցանք կորուստներ:

Ապրիլյան առաջին իսկ օրերին սկիզբ առավ համաժողովրդական շարժում, որը հայրենասիրության բացառիկ դրսեւորում էր: Բոլորը համախմբվեցին մի ընդհանուր գաղափարի շուրջ, յուրաքանչյուրը յուրովի վերագնահատեց ու վերաարժեւորեց հայրենիքն ու պետականությունը եւ հաստատակամ կանգնեց հայ զինվորի կողքին՝ կանխելով մեր երկրի անվտանգությանն սպառնացող ոտնձգությունը:

Հայրենասիրության, միասնականության ու համախմբվածության նորօրյա դրսեւորումներով համակված՝ Երեւանի պետական համալսարանը եւս անմասն չմնաց հայրենիքի պաշտպանության գործից՝ բազմաթիվ ծրագրեր իրագործելով: Հայրենաշունչ այդ ոգին



Մայր բուհի գոյության մշտական ուղեկիցն է եղել Հայրենական մեծ պատերազմի, 1965 թ. ազգային զարթոնքի եւ Արցախյան գոյապայքարի ողջ ընթացքում:

Ապրիլյան պատերազմի օրերին ԵՊՀ-ի ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի նախաձեռնությամբ ձեւավորված Մարտական պատրաստության ակումբում գրանցվեց ավելի քան 200 ուսանող կամավորական: Ակումբի անդամները եւ նրանց շարքերը համալրած համալսարանականները ձեւավորեցին ջոկատ եւ մեկնեցին Արցախ՝ հայրենիքի մերօրյա պաշտպաններին զորավիգ լինելու եւ մեր իսկ արյամբ սրբագործված հողը հակառակորդից պահելու համար: Ջոկատի անդամներն աչքի ընկան իրենց կազմակերպվածությամբ, կարգապահությամբ եւ զինվորական պարտականությունների ճշգրիտ կատարմամբ, որն ըստ արժանվույն գնահատեցին զորամասի հրամանատարությունը եւ աշխարհազորայինները:

Արցախի առաջնագծում գտնվող զինվորներին եւ ռազմական բախումներից տուժած ազգաբնակչությանը համալսարանի ուսանողները կազմակերպեցին օգնություն՝ առաջին անհրաժեշտության իրեր, դեղորայք, սննդամթերք, տնտեսական ապրանքներ հասցնելով նրանց:

Ռեկտորատի արտահերթ նիստում կայացվեց որոշում՝ բացելու առանձին հաշվեհամար, որպեսզի աշխատակիցները եւ ուսանողները կամավոր հիմունքներով դրամական օգնություն ցուցաբերեն Արցախի առաջնագծում գտնվող զինվորներին եւ սահմանամերձ գոտիներում ապրող մեր ազգաբնակչությանը: Հավաքվեց 8 մլն դրամ, որով գնվեցին առաջին անհրաժեշտության իրեր, իսկ գումարի մյուս մասը ԵՊՀ-ի տրամադրած 20 մլն դրամ գումարի հետ փոխանցվեց ԼՂՀ կառավարության կողմից բացված հատուկ հաշվեհամարին:

ԵՊՀ-ի ուսանողական բոլոր կառույցները կազմակերպեցին տարաբնույթ միջոցառումներ: ԵՊՀ-ի մշակույթի կենտրոնն ապրիլի 29-ին իր երգի-պարի խմբի եւ «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սաների ուժերով ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական հոսպիտալում կազմակերպեց համերգ՝ ի զորակցություն Արցախում վիրավորված զինվորների: Մարտական պատրաստության ակումբի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում բացվեց «Ճանաչենք մեր հերոսներին» խորագրով լուսանկարների ցուցահանդես, որի հերոսները քաջարի հայ մարտիկներն էին:

ԵՊՀ-ի «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի անդամները, պարբերաբար այցելելով ՀՀ ՊՆ զինվորական հոսպիտալում բուժվող զինծառայողներին, բարձրացնում էին նրանց մարտական տրամադրությունը՝ նախապատրաստելով նրանց օր առաջ դիրքեր վերադառնալուն, իսկ ակումբի «Վարդանանք» թերթի էջերում մշտապես լուսաբանվում էին թե՛ համալսարանական եւ թե՛ ՀՀ նորօրյա հերոսների կյանքն ու գործած սխրանքները, որոնք հայրենասիրության լավագույն դասեր են:

Քառօրյա պատերազմին մասնակցած բազմաթիվ համալսարանականների մեջ իրենց քաջությամբ եւ հերոսական սխրանքներով աչքի ընկան ԵՊՀ-ի տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող, ՀՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ Շուլի Հակոբյանը, որը 2016 թ. ապրիլի 4-ին 30 րոպեի ընթացքում խոցել է հակառակորդի «T-80» տեսակի 3 տանկ, եւ ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Գեւորգ Մանուկյանը, որն արժանացել է ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի եւ ՀՀ «Արիության մեդալի», 2016 թ. ապրիլի 2-ին խոցել է հայոց բանակի մարտական դիրքերի ուղղությամբ հրթիռներ արձակող հակառակորդի «МИ-8» տեսակի ուղղաթիռը:

Համալսարանական հայ զինվորների նորօրյա սխրանքները փաստում են, որ ներկա համալսարանական նոր սերունդը, առաջնորդվելով Հայրենական մեծ պատերազմի տարիներին իր պապերի ցուցաբերած սխրանքներով, շարունակում է հերոսական կռվի ավանդույթը մեր հարեւան ոսոխի դեմ: Ապրիլյան քառօրյա պատերազմը հերոսական մի նոր էջ դարձավ հայ ժողովրդի պատմության մեջ՝ ցույց տալով, որ հայն իր անկոտրում ոգով ու կամքով միշտ պատրաստ է մինչեւ արյան վերջին կաթիլը պայքարելու հանուն հայրենիքի, հանուն խաղաղության, հանուն իր ազգային արժանապատվության:

Այսպիսով՝ սույն հոդվածաշարում բերված փաստերը մեկ անգամ եւս հաստատում են այն ճշմարտությունը, որ Երեւանի պետական համալսարանը եղել եւ մնում է ազգային կրթության եւ գիտության հզոր կաճառ, որտեղ կրթվել եւ հայրենասիրական ոգով դաստիարակություն են ստացել ու կյանք մտել բազմաթիվ սերունդներ: Համալսարանի շրջանավարտներից շատերը դարձել են ոչ միայն անվանի գիտնականներ, գրողներ՝ մեծ ճանաչում բերելով մեր երկրին նաեւ նրա սահմաններից դուրս, ինչպես նաեւ հասարակական-քաղաքական ու պետական մի շարք ականավոր գործիչներ, այլեւ հայրենիքի վտանգի պահին՝ Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախյան ազատամարտի տարիներին, միշտ պատրաստ են եղել թե՛ ռազմաճակատում եւ թե՛ թիկունքում լուրջ հետք թողնելու իրենց հերոսական սխրագործություններով, ազատագրելու եւ պաշտպանելու հայրենիքը ոսոխի հարձակումներից:

Այսօր, երբ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակից անցել է 75, իսկ Արցախյան շարժման սկզբնավորումից՝ 32 տարի, ԵՊՀ-ի ուսանողական լսարաններում սովորում եւ ազգային ոգով դաստիարակվում են Հայրենական մեծ պատերազմին մասնակցած, ինչպես նաեւ զոհված համալսարանականների թոռներն ու ծոռները եւ Արցախյան ազատամարտին մասնակցած ու նաեւ նահատակված համալսարանականների զավակները: Այս ամենը վկայում է, որ մեր ժողովրդին հաջողվել է հաղթանակով թերթել հայոց նորագույն պատմության փառավոր էջերը, քանի որ նորօրյա մի ամբողջ սերունդ ոգեշնչվում է անմահ հերոսների սխրանքներով:

Սակայն 2020 թ. սեպտեմբերի 27-ին վերսկսվեց արցախյան պատերազմը: Կրկին ոտքի կանգնեց մեր ողջ ժողովուրդը, կրկին համալսարանականները՝ դասախոս թե ուսանող, ի մահ կանգնյալ մեկնեցին հայրենի հողը պաշտպանելու: Ցավոք, մեր այսօրվա ապաշնորհ ու հանցագործ ղեկավարների պատճառով, նրանց անհեռանկար ու ստահոդ հաշվարկներով, ասես, հօդս ցնդեցին մեր տարիների բոլոր հաղթանակներն ու ձեռքբերումները, մեր լինելության ամուր կռվանները: Բայց, այնուամենայնիվ, մենք հուսահատվելու իրավունք չունենք, իրավունք չունենք խավարի որդեգիրներ լինելու, եւ ինչպես բանաստեղծն է ասում.

Պիտի սեղմըվենք աջ ու ձախ թեւից,
Սեղմըվե՛նք անվերջ-անվերջ խտանա՛նք,
Բայց... չբթանանք այնքան, որ կարծենք,
Որ եթե մթան խտացումից է միշտ լույսը ծնվում,
Ապա կծնվի ինքնաբերաբար...

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ստեփան Զորյանի «Տխուր մարդիկ» պատմվածաշարը

Սկիզբը՝ էջ 7

«Ճաշ» պատմվածքում Զորյանը պատկերել է իրականության անհեթեթ եւ ձանձրալի հատվածներից մեկը: Լեւոն Ազիզյանը ճաշում էր միշտ մենակ՝ բամբասանքից ու կողոպուտից ազատ մնալու համար, նա երբեք ճաշի չէր հրավիրում ազգականներին եւ ծանոթներին: Զորյանը չի միջամտում գործողությունների զարգացմանը, սակայն հեղինակային իր դիրքով եւ վերաբերմունքով դատավճիռ է կարդում ձանձրալի եւ սահմանափակ կյանքի նկատմամբ: «Զմռան գիշեր» պատմվածքում ներկայացված է հերոսների կյանքի միայն մեկ գիշերվա պատմություն: Հեղինակն այստեղ խստացնում եւ ավելի տպավորիչ է դարձնում հերոսների տաղտկալիության զգացողությունը:

«Բարեկամներ», «Ջերմաչափ», «Զմռան գիշեր», «Շաքարաման», «Վճռական մարդը» պատմվածքների հերոսները ճնշված, ծիծաղելի եւ անզոր են. նրանք ապրում են իրենց մանր հոգսերով: Ամեն մի ընդհարում իրականության հետ նրանց համար կարող է ունենալ աղետալի հետեւանքներ: Եվ բնական է խղճահարության այն զգացումը, որով գրողը վերաբերվում է իր հերոսներին, երբեմն էլ ներում նրանց թերությունները: Ծանր ճնշման տակ ծնունդ է առնում մարդկային խղճմտությունը:

Շարունակելի

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am astghikstam@gmail.com
web կայք՝ krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 30.12.2020 թ.
Տպաքանակը՝ 1175